2739
2740
2741

2742
2743
2744

26
Ru-30
1988

2010

FB 2001

2012

Printed in Turkey

92 կ.
Հաստա-Քարտեզ Սարգիս

ՆԱՄԱԿ

Տ. ՍԱՐԳԻՍ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՋԱԼԱԼԵԱՆՑ

ԳՐԵԱԼ

ԷՄ ՅԱՐԳՈՅ ԷՋԳԻՅԻՆ ՈՄԸՆ

Ի Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԵԱՅ

— 1867 —

23029

2286
40

Դ 5 մարտի 1865 'ի վանս Սանահնի

Օրհնեալ տիրելի՛.

Ընկալայ զնամակ ձեր դրեալն 'ի 15 նոյեմբերի 1863 ամի. ընկալեալ եմ նաեւ զնամակն զոր նախ քան զայս դրեալ էիք։ Այս բնակիմ ոչ այլ եւս յԼչմիածին, ուրանոր դառնանալոյն կեանք, երբ նուիրել ոք խորհեր զնոյն յաղդաշահ պէտս գործառնութեանց։ Զէր անդանօր ոչ ուրախութիւն սրտի, ոչ քաղցրութեան վայելք եւ ոչ կեանք իսկ դլխովին 'ի տարօրինակ ներդործութենէ Ս. Մատթէոսի կաթուղիկոսի առ ամենեսին՝ եթէ ոք երջանկութիւն ինքեան համարեսցի զբարօրութիւն ընդհանրութեան, եւ փոխարէն վաստակոցն հանդիպեսցի անհանդստութեան մոռաց, վաստակաբերութեանց անրմբերելեաց եւ ապերախտութեան քինաւոր սրտից ոմանց համախոհից նորա եւ այլոց։ Կայարան բնակութեան իմոյ է արդէն 'ի վանս Սա-

նահնի։ Աստանօր առանձնութիւն քաղց-
բացուցանէ ինձ զամենայն բարեզդաց վա-
յելս վերաբերեալս առ ճշմարիտ սիրտիանս
եւ գերութիւն սրտի եւ հոգւոյ, որք դի-
տեն քաջ մխիթարել զոք 'ի կեանս նուիր-
եալս ոչ յանձին եւ եթ պիտանաւորու-
թիւն։ Ընդ թագաւորէ խաղաղութիւն
երկնային եւ անդանօր դատանի երջանկու-
թիւն կենաց, ուր սէրն ազատութիւն գը-
տանէ որ առ բարին ընկերութեան եւ
ազգութեան առ պարտաւճար դատանելոյ
ուրուք յարդարայի պարտուցն, թէ եւ
ապերախտութիւնք եւ դաւանք մարդկա-
յին նախանձաւորութեանց՝ յառաջելոց 'ի
կրից՝ մատչիլ կամին յոք տեղի տալ մեռ-
ելոյ առ նա ձանձրութիւց եւ ընդ նմին ող-
բալոյ զկորութիւնս որոց անկարանան աչք
'ի լուսաւոր տեսութիւնս յառել. սակայն
եւ այնպէս չիք այնպիսի ինչ զօրեղ՝ որ
մեկնիցէ զփափաքումն եւ զցանկութիւն
սրտի ընծայելոյ արդէն 'ի պարսան զօրս
պարտիսք առնել։ Ինն ունիմ 'ի բարերա-
րութենէ մարդասիրութեանն Աստուծոյ,
զի գտից այսրէն հանդիստ ըստ կարեաց
լմնոց լինել օգտակար ազգին ուսումնարա-
նաւս զոր կառուցանելոյ եմ ատ 'ի Սա-
նահին։

Սիրաք՝ որք սովորեալ են կրել յինք-
եանս ցաւակցութիւն վասն ազգին, եւ
այնպէս եռանդուն հոգւով բերին 'ի կա-
րեկցական վիշաս, չեն աղատք 'ի կրելոյ
եւ զտադնապ եւ զապաշաւանս ցաւագի-
նրս, տեսեալ զյառաջադէմ լինել եւ ըզ-
յաղթանակութիւն ստացեալ որոց ընդ
ներքոյ ոսից դնել եւ անհետանալ ըստ ար-
ժանւոյն յաղգութենէն 'ի զուր կրթին
պաշտպանք նորա եւ բարերարք։ Դաւա-
ճանութիւնն եւ ազգաւեր հետամտու-
թիւնն ազատաբայլ յառաջադիմեն յասպա-
բիզի դատաստանի ազգին եւ պոակին 'ի
գովութեան, մասն ընկալեալ յորմէ դա-
տապարտել եւ հալածել արժան էր արդ-
եօք։ Այ արդարեւ վիշա մեծ է ամենայն
բարեզդաց եւ հոգւոյք Ազգին ծանրա-
բեռնեալ սրտից 'ի յուշ ածել զվիճակ
նորա եւ զդատումն մեաց դիւրախաբ,
զոր գողանալ ոչինչ դժուարին ապերախ-
տութիւնք մարդելուզաց, որք զարդար-
եալ վարագուրաւ հաւատարմութեան ըզ-
խարդախ շահախնդրութիւնս իւրեանց եւ
զազգաւիրաս ապերախտութիւնս։ Յաւ է
ինձ եւ զեղջ անհանդուրժ։ Ազգն մեր խը-
նամեալ եւ երախտաւորեալ 'ի սկզբոյ հա-
ւատարմաց իւրոց, փոխանակ սրատես իւ-

րով.ք աչօք եւ խոհականութեամբ մնացն կշռելոյ զնոյն, գիտէ բազմիցս 'ի բազում ժամանակս թողուլ զարդար եւ զանմիջական զդացողութիւնս իւր, խաբի յոլովապէս, եւ հաւատարմանայ զպարտս իւր այնոցունց՝ որք ապականիչքն են ինքեան եւ աւերիչք գլխովին. զսիրտ իւր եւ զհայեցողութիւն տայ 'ի ձեռս այնոցունց՝ որք կեղեքքեն զինքն եւ պատրեն եւ դողանան զուշնորա եւ զմտաց առողջ դատողութիւն նորա եւ 'ի յառաջադիմութիւն նորին։

Զդ մեր ընտիր է յազգութեանց. որոշեալ է նա վայելել յերկնաձիր յատկութիւնս սեպհական իւրոց կատարելութեանց. բայց որան զնա խարդախքն յանհատս նորա եւ օտարին կամ թամբք մնեալքն. սանձ 'ի ձեռս առնուն զնորա վատաբարոյքն եւ չարագործքն, եւ անգոսնելի կրիւքն իւրեանց սանձակոծեն զնա կաշկանդեալ ազատականութեամբքն իւրեանց։ Ա՛ռ խորհրդածութիւնս այսոսիկ ցաւագած լինի սիրտ իմ արդա՛րեւ, բայց արժա՞ն էր նմա արդեօք երեւեցուցանել զինքն անորդեսէր եւ առ ոտն հարկանող զսէր որդւոց իւրոց գորովողաց զինքն, եւ տեղի տալ նոցա առնուլ 'ի բերան զբան Մարգարէին. «Տնկեցի ինձ այգի, ցան-

կով փակեցի, եւ մնացի զի բերցէ ինձ խա-
զող եւ երեր փուշ։ Ի մասնաւորս դար-
ձուցից ուրեմն զբանս եւ խօսել սկսայց
խուն մի զընթացից գործոյն իմոյ, որ գայ-
թակղութեան է առիթ որոց ներհակա-
պէս հասանին 'ի լսելիս իսկութիւն իրացն,
եւ թէ՝ որպէս ասէիր։ Զօլսեցւոց ողջա-
միտ մասն մինչեւ անգամ ձեր վրան աղէկ
գաղափար չունէին։ Ահա թո՛ղ լուիցեն
նոքա՝'ի ներքոյ դատաստանաց եւ ողջմտու-
թեան նոցին արկանեմ. տեսցեն, եւ դա-
տեսցին արդարապէս զգործսն իմ եւ զամ-
բաստանողացն զմտաց յուզմունսն։ Տակա-
ւին խօսեցայց զորոց խօսիլ ստիպիմն առ
հարկի եւ եթէ յիշեցուցանել կամելով զայնս՝
որոց առանձնական յիշատակութիւնք դիւ-
բեն խղճմտանացս ուրոյնապէս, եւ չէր իսկ
արժան խօսիլ՝ եթէ չէր ստիպեալ հարկն
զբանիւք դալ յաւուրց անտի վարդապե-
տութեանս իմոյ։

Ը. Այս եղէ ալակից Յարութիւն Եպ-
սկոպոսի առաջնորդին Սանահնի վա-
նից. յանձն առի զամենայն ծանրութի-
թիւնս գործոց. մատակարարեցի զնուռնդ
եւ զդրամ մշակացն 'ի կատուցանել զամե-
նայն շինուածս նոյն վանից։

Թ. Յանձն առի շրջիլ հիւանդադին

դրութեամբ յամենայն վիճակս Աստուծոյ եւ Շ՝ամախու եւ Ժողովեցի զգումարս դրամոց 'ի կառուցումն հոյակապ եկեղեցւոյ Ղ՝արաքիլիսայ գեղջ, դիւրատար լինելով ինձ ցաւ անձինս 'ի հոգալ զպէտս ժողովրդեան։

Գ. Յանձն առի տաժանակիր ճանապարհորդութեամբ եւ ըստ իմում կարողութեան ժողովեցի զարձանագրութիւնս Աեծին Հայաստանի, զի մի՛ ժամանակն հեռասցէ զյիշատակարանս նախնեաց, զորս եւ ընծայեցի Ներսիսեան Ուսումնարանին Տփղիսայ վասն աղքատ աշակերտաց։

Դ. Կառուցի զՍրբազան 'ի վանս Սանահնի, զարդիւնս որոյ յատկացուցի աղքատ աշակերտաց, եւ պեղեալ 'Հարթեցի զբաղմակուտակ դեռոյնն, որ կիսով չափ ծածկեալ էր վանան հորդեալ 'ի հեղեղաց 'ի դարաւոր ժամանակաց հետէ, եւ 'ի նորոյ զպարիսպն կառուցի։

Ե. Յետ կորզելոյ հոգեւոր իշխանութեան զվիճակն Սանահնի եւ յետ արկանելոյ զնա 'ի վերջին թշուառութիւն, դարձեալ կառուցի անդանօր զհոգեւոր՝ դպրոց, եւ ես զչորաբեկ հաց թագեալ 'ի ջուր՝ նովաւ շատանայի, սակայն իմովք հայթայ-

թանօք պահեցի անդանօր հարիւրաւոր ա-
շակերտս ձրիաւարժս, եւ ըստ իմում կա-
րողութեան եղէ պատճառ լուսաւորու-
թեան այնոցիկ բնակչաց՝ որք ծածկեալ է-
ին ընդ խաւարաւ տգիտութեան, եւ որոց
յեռոյ դիւրընկալ եղեւ ուսումնականու-
թիւնն, եւ 'ի նոցունց ելին բազում պի-
տանի անձինք, որք եւ ինեւ առաքեցան 'ի
զանազան տեղիս 'ի բարձրագոյն ուսմունս։

Զ. Յանձն առի զտաժանելի եւ ըզ-
դժուարաքիրան ազգային գործոն յանձ-
նարարութեամբ Տ. Սրին Պ. Եհսեփեանց
Տեառն Տ. Երսիսի, եւ զամս վեցա-
սան շրջեցայ 'ի լայնածաւալ աշխարհս պե-
տութեան Ռուսաց ուր եւ զտանէին հայք,
կրելով զվիշտս յընտանի աւազակաց, 'ի
սուտ եղբարց, 'ի սովու 'ի ծարաւու, 'ի ծո-
վուց 'ի գետոց, եւ 'ի նմին գործառնու-
թեանս ես եղէ միայն գրագիր եւ անօրէն
ամենայն գրագրութեանց. տեսի զամե-
նայն հաշիւս եկեղեցեաց, բացի բազում աղ-
բիւրս արդեանց, յայսմանեցի եւ ժողովեցի
զգաղեալ արդիւնս ցուցանուն հազար մա-
նէթս արծաթոյ եւ առաքեցի առ Կաթո-
ղիկոսն Տ. Երսէս, եւ մինչեւ ցեօթանասուն
հազար մանէթս արծաթոյ թողի ապառիկ
հանեալ յանցուսալի տեղեաց, որ այժմ պա-

հանջին յօգուտ Աղդի եւ եկեղեցւոյ։

Ի. Պատճառ եղէ շինութեան հոյակապ վանացն Ղ՝զլարու, որ յառաջն էր փոքրիկ փայտեայ խրճիթ, եւ արդիւնք նորա լինէին 'ի ձեռն Խարսեղ եպիսկոպոսին երեք հարիւր մանէթ. յետոյ եղեւ դեղեցիկ վանք եւ արդիւնք նորա 'ի յայտ եկին ցերեք հազար մանէթս արծաթոյ։

Ը. Եղէ պատճառ շինութեան հոյակապ եկեղեցւոյն Մողդոկայ 'ի մխիթարութիւն ժողովրդոյն, զի յառաջն էր անշուք փայտեայ հիւղ ամրացեալ 'ի նեցուկս։

Թ. Յանձն առի ժողովել զմանկունս Յուտէացւոց, նա եւ 'ի Ղ՝զլարայ, 'ի Մաշառայ, 'ի Ղ՝օրայէ, 'ի նոր Արմաւիրէ եւ յայլ տեղեաց, եւ առաքեցի զնոսա 'ի Տբփխիս, զի ուսանիցին զուսումն 'ի լեզու հայրենի եւ դարձցին եւ եղիցին վարժապետք եւ վարժեսցեն զհայրենակիցսն իւրեանց։

Ժ. Կառուցի 'ի Թիֆլիս հոյակապ եւ արդիւնաբեր կաղուածս քարուկիր շինուածովք, ուր թանձն սենեակս մեծամեծս եւ փոքունս, եւ զնոյնս սեպհականեցի տաղդին։ Գեռինն՝ որոյ Աբերսէս էր պատճառ, 'ի զուր կորնչէր, եւ ես չունելով առ ձեռքն դրամ 'ի նոյն, խնդրեցի 'ի Մատթէոս Արք-եպիսկոպոսէ տեղւոյն առաջնոր-

դէ հարազատէ Սրբոյ Էջմիածնի փոխարի-
նաբար զերկու հարիւր մանէթս արծաթոյ,
եւ ոչ կարացի ստանալ, այլ զկահ եւ զկարա-
սիս իմ տուեալ գրաւ։ Երէի ուրուն եւ
իւրացուցի յօգուտ աղգի՝ յառաջ վարելով
զգործն. բայց զարմանք, զի որ խնայեաց
տալ 'ի փոխ զերկու հարիւր մանէթ, կամե-
լով կորուսանել զդեռինն ազգապատկան,
որ էր ութ հազար քառակուսի սաժէն 'ի
մէջ քաղաքին Թիֆլիսու եւ դնահատիւր
ընդ յիսուն հազար մանէթս արծաթոյ,
այսօր նա գովի եւ ես պարսաւիմ։

ԺԷ. Յանձն առի տաժանակիր աշ-
խատութեամբ եւ ժողովեցի վասն Իզմի-
րու սիրելի ժողովրդոց վտանգելոցն 'ի հրդ-
եհէ մեծաբանակ գումարս դրամոց։

ԺԻ. Ջանացի իմով միջնորդութեամբ
առ վեհաղուն անձինս եւ առաքեցի յու-
սումն դիտութեան զորդիս ազգին, որ-
պէս զի մարդեալք 'ի զանազան ուսմունս
եւ արհեստս՝ դարձցին 'ի հայրենիս իւրեանց
յօգուտ ազգի եւ եկեղեցւոյ։

ԺԿ. Իմով խնդրանօք եւ միջնոր-
դութեամբ 'ի փոխարքայէն Կովկասու դա-
դարեցուցի զշարունակութիւն գործոյն,
որով եւ սեպհականեցի յօգուտ ազգին ըզ-
գետինն որ 'ի Տփխիս, որ սուելի արժէ քան

զքսան հազար մանէթս արծաթոյ, 'ի վերայ որոց եռաւ կառուցանել 'ի ձեռն հոգաբարձուաց հոյակապ քարուկիր շինուածս ուխտաւն եւ չորս կրպակաց 'ի վերնայարկս եւ 'ի ներքնայարկս, որ յառաջն անկեալ ընդ վիճով զամն երիս մնայր քայքայեալ եւ չէր ամենեւին հրաման շինութեան։

ԺԴ. 'Ի դին միոյ կրպակի շինութեան եռաւ հազար մանէթս, որպէս զի արդեամբ նորին ուսանիցի աղքատ աշակերտ մի 'ի հաշիւ մեր եւ այնպէս շարունակեսցի յաւիտեան, եւ այժմ այնոցիկ կրպակացն վարձ եհատ առաւել քան յերկու հազար մանէթս արծաթոյ, եւ դեռ եւս յաւելանալ ունի 'ի պէտս ազգի եւ եկեղեցւոյ, նոյնպէս եւ զերկուս կրպակս իմով արդեամբ կառուցի 'ի Քիշնեւ յանուն Էջմիածնայ։

ԺԵ. Յերիս կողմանս ուսումնարանին Տփխիսայ եռաւ կառուցանել պատուական շինուածս 'ի ձեռն պատուելի հոգաբարձուոց, յորս զետեղին ննջարանք աշակերտաց, դասատունքն, սեղանատունն եւ դահլիճն, այնու դիտաւորութեամբ զի երբ նորոգեսցի հին ուսումնարանն ըստ պատշաճին, զնոր շինուածսն տացեն վարձու։

ԺԷ. Յանձն առի նոր 'ի նորոյ կառուցանել զխախտեալ եւ զանմարդաբնակ

աւերական հիւրանոցի Վանից, զոր եւ կառուցի 'ի Տփխիս եւ յաւելի զարդիւնաբերա առաւել քան զհազար մանէթս արծաթոյ 'ի պէտս աղքեն։

ԺԷ. Յանձն առի տալ կառուցանել տասն կրպակս Մխիթարեայ, որպէս զի արդիւնք նորա բաժանեսցի 'ի կարեւոր պէտս աղքատաց։

ԺԸ. Յանձն առի նոյնպէս կառուցանել հոգեւոր դպրոցս 'ի Ռուիթայիս, 'ի Գօրի, 'ի Թէլաւ, 'ի Գանձակ, 'ի Սանահին, 'ի ձեռն հաւատարիմ վարդապետաց իմոց եւ իշխանաց, որպէս զի որդիք աղգիս՝ որ անդիտակք են բնաւ հայրենի լեզուաց՝ ուսցին անդադար եւ լուսաւորեսցին զհայրենակիցս իւրեանց։

ԺԹ. Յանձն առի դժուարակիր աշխատութեամբ վերանորոգել զհինգհարիւրամեայ աւերակ պարիսպ վանացն Տփխիսայ, եւ զշինուածսն Առաջնորդարանին մաքրեցի յարդարեցի եւ 'ի նորոյ կառուցի հաստահիմն պարիսպ եւ զշքեղ Առաջնորդարանն, եւ յերկուց կողմանց յաւելի հարթ հաւասար լայնարձակ դեռնեա ցեռթքն հարիւր քառակուսի սաժէն, որ աւելի արժէ բոլորն 'ի միասին քան զերեսուն հազար մանէթս արծաթոյ, առանց

ձեռնամուխ լինելոյ յեկեղեցական եւ 'ի վիճակային արդիւնս։

Ի. Իմով դրութեամբ խնդրեցի 'ի վեհափառ Աղթուղիկոսէն զի տացէ ինձ հրաման առ 'ի կառուցանել 'ի պարսպի վանաց Տփխիսայ հոյակապ երկյարկեան ուսումնարան ժառանգաւորաց, առանց ձեռնամուխ լինելոյ յեկեղեցական եւ 'ի վիճակային արդիւնս, զի եւս արդէն պատրաստեալ էի յիմոց տաղանդաւոր բարեկամաց ինեսուն հազար մանէթս արծաթոյ. նոյնպէս բացեալ էի եւ զաղբիւրս ուսճկաց վարժապետացն եւ այլոց հարկաւորութեանց, որպէս զի անդանօր ուսցին ամենայն հոգեւորականք ազգիս, զդենլով ընդհանդերձս ըստ ձեւոց հոգեւորականաց սովորութեան եւ 'ի մանկութենէ ընտելացեալ 'ի վերաբերեալսն հոգեւորականութեան. բայց զարմանք, զի այնպէս համոզեցին զ'Աղին սրբութիւնն 'ի խափանումն նորին, մինչ զի եւ ոչ իսկ պատասխանի ընկալայ իմոց խնդրանաց։

ԻԱ. Խնդրեցի նոյնպէս 'ի 'Աղին վեհափառութենէ իմով դրութեամբ եւ առաքեցի զայն 'ի ձեռն Աղիսաղար Աբբեպիսկոպոսի, զի կառուցից զմեծ եւ հոյակապ կարաւանաց 'ի Տփխիս, որ կարիցէ բերել

'ի տարին արդիւնս առաւել զքան հաղար մանէթս արծաթոյ 'ի պէտս դպրոցին Էջ-միածնայ, զորոյ հիման քարինսն ժողովեալ էի արդէն. բայց վերսին դրդեցին ըզ-Կաթուղիկոսն եւ չթողին զո՛նէ պատաս-խանի առնել։

ԻԲ. Խնդրեցի նոյնպէս կառուցանել դպրոց ժառանգաւորաց 'ի Հաղբատ, 'ի Սանահին, եւ 'ի վանս Թարգմանչաց որ 'ի Գանձակ, զի անդանօր ուսանիցին քա-հանայացուք 'ի բարի վարս եւ յուսմունս վասն դիւղօրէիցն մերազանց. բայց եւ այնպէս խավանեցին եւ ոչ ետուն թոյլ առնել պատասխանի։

ԻԳ. Գրաւոր կերպիւ յանձն առի բանալ աղբիւրս արդեանց առաւել քան զքառասուն հաղար մանէթս արծաթոյ 'ի տարին, զի Էջմիածին կառուսցի մեծ եւ վայելուչ բազմալեզուեան ճեմարան եւ անդ ուսանիցին աշակերտեալք զանազան գիտութիւնս եւ անտի ելանիցեն լուսաւոր գիտութեամբ պաշտպանք ազգի եւ կրօնի վասն առաջնորդութեան 'ի զանազան տե-ղիս եւ վասն կաթուղիկոսութեան, եւ Էջ-միածինն մի՛ մնասցէ կարօտ Վենետկոյ դրեանց ըստ ամենայն մասանց, որպէս զի բարձցին յաւիտենական նախատինք 'ի թի-

կանց ամենայն վարդապետաց . այլ խափա-
նեցին եւ զայս առաջարկութիւն իմ եւ ոչ
եղէ անգամ պատասխանւոյ արժանի ։ Տե՛ս
զի՛նչ գրէ վասն այսր երջանկայիշատակ
Պատրիարքն ամենայն Հայոց Տ. Ներ-
սէս . « Պ անքն Զ ազարու որ 'ի Պ ենե-
« տիկ՝ հիմնեալ 'ի փախստական կամ ար-
« տաքսեալ վարդապետէ 'ի Մխաբանու-
« թեանց Աթոռոյն Էջմիածնի՝ 'ի բարեյի-
« շատակ Մխիթարայ Սեբաստացւոյ , 'ի
« կարճ ժամանակի զհիմնարկողն 'ի սատ-
« կադին իւրումն աղքատութեան պանծա-
« ցուցանէ Մխիթար Սրբոյ Հայր ան-
« ուամբ , եւ զեկեղեցին իւր եւ զՄխաբա-
« նութիւնն հանդիսացուցանէ յաչս աղ-
« գայ բազմաց դոլանիս եւ փառաւորս ,
« բազմաւ արդիւնաւորութեամբ միոյ միոյ
« իւրաքանչիւրոյ նոցա . իսկ ապաբաղդ Ա-
« թոռն ընդհանրական Մայր եկեղեցի ա-
« մենայն Հայոց Պատրիարքն Էջմիածին՝
« 'ի դարուց ժամանակաց յաջողութեանց
« իւրոց եւ անյաջողութեանց՝ այսօր ահա
« գտանի 'ի սին ողբալի դրութեան , զի
« ես ինքն անուանեալ Պատրիարքս ամե-
« նայն Հայոց գտանիմ գրագիր կաթո-
« ղիկոսական , եւ Ամենակալք 'ի Սինոդի
« գրեն առ իս զայնպիսի իւրեանց թիւ-

« բաղատութիւնն անյուսիր չարադրու-
« թեամբ իւրեանց ատենաբերի առանց
« կանխադատութեանց բանիցն զորս ըս-
« տորագրեն, եւ ո՞այսոցիկ չարաբաղդու-
« թեանց առիթ, եթէ ոչ պակասութիւն
« նախահոգութեանց եւ հեռատես կար-
« գադրութեանց առաջնոց եւ վերջնոց
« միաբանութեանց Աթոռոյ Էջմիածնի։ »

Աստ այն բանք են, զորս գրեաց Ն-
ոյին վեհափառութիւնն 'ի յաւիտենական
նախատինս մեզ հոգեւորականաց։

ԻԳ. Յանձն առի իմով միջնորդու-
թեամբ եւ ազատ արարի յարքունական
հարկաց զամենայն կալուածս քահանայիցն
հայոց, որք մինչեւ ցայս վայր մնային ա-
ռանց ուշադրութեան, վասն զի առնք
յորս բնակէին հոգեւորականք հանդերձ
քանի մի սենեկօք՝ ազատ էին արդարեւ
'ի հարկաց, իսկ այլ ամենայն կալուած եւ
'ի վարձու տուեալ տունք եւ կրպակք անկ-
եալ կային ընդ հարկաւ ըստ օրինակի աշ-
խարհականացն։

ԻԴ. Իմով միջնորդութեամբ կարճե-
ցի ժամանակ ընկալելոյ զօտարազգիսն յե-
կեղեցիս մեր մինչեւ 'ի մի եւ կամ յեր-
կու եօթնեակս, զի որք ցանկանային յա-
ռաջն՝ յետաձգիւր գրեթէ ամօք եւ ամ-

ոօք, եւ ցանկացողքն յուսահատեալք դառնային դարձեալ 'ի հաւատս իւրմանց։

Ի.Օ. Իմով միջնորդութեամբ առ փոխարքայն Կովկասու վերադարձուցի զյաջիշատակեալ կալուածս Էջմիածնայի եկեղեցւոյն, որ աւելի արժեն քան զհարիւր հազար մանէթս արծաթոյ. թողութիւն զայլ բազում աղգաշահ գործողութիւնս։

Երիանկայիշատակ Պատրիարքն Տ. Ներսէս վկայ անձանձիր իմոց ծառայութեանց առ ազգն եւ առ եկեղեցին, իւրով օրհնալիր բերանով եւ խորին զգացողութեամբ սրտին յորջորջեր մշտապէս եւ կոչեր զանարժանս «քրտնաջան անձանձիր աշխատող, բազմաջան եւ բարեջան մշակ ազգի եւ եկեղեցւոյ»։ Ահա այսոքիկ էին իմ դիտաւորութիւնք, ուսեալ 'ի դասատիարակէն իմմէ, ծառայել ազգի իմոյ սիրելոյ հաւատարմութեամբ եւ անձնուրացութեամբ, եւ ոչ թէ ծարաւ վիճակի եւ դրամոյ, որպէս կարծէին մտախարքն. իսկ այժմ ո՛վ է անհաստարիմն, ընդ ներքոյ զրպարտութեան անկեալն, հալածեալն, ատելին, եւ 'ի խորշս ինչ վանաց մենացեալն, դարձեալ ես։

Այս զայսոսիկ դրեցի մի միայն 'ի գիտութիւնձեր եւ ոչ բնաւ 'ի պարծանս ան-

ձին իմոյ, զի եթէ կատարեցի՝ պարտք էին ինձ. ուրեմն մնայ ինձ ասել թէ ծառայ անպիտան եմ եւ զորն պարտն էր առնել արարի. իսկ եթէ ոչ կատարէի՝ վա՛յ էր ինձ, զի մնալոց էի պարտական առաջի Աստուծոյ եւ աղդին իմոյ սիրեցելոյ ըստ իմում որբազան պաշտօնի։ Բայց այժմ առ ի՞նչ պէտս եւ վասն է՞ր իբրեւ անձն անպիտան զրպարտիմ եւ տարագրիմ։ Զվասն էրս զայս համառօտակի ի՛ն ի յայտ ածել ոչ ձանձրացայց՝ առ ի գիտունս առնել ընբարեկամդ իմ ի վերահասութիւն իրացն։

Նախ՝ ի կողմանէ եղբարց ոմանց եպիսկոպոսականաց, եւ երկրորդ ի կողմանէ քանի մի աղատամիտ երիտասարդաց։

Ներսէս Ա. Եհափառ Կաթողիկոսն կամեցաւ կարդել զՊ. Պետրոս Շանչեանց ի պաշտօն վերատեսչութեան ուսումնարանի իւրոյ ի Տփղիս ի 1849 ամի, եւ եւ քանի մի խորհրդակիցս ի նոյն պաշտաման, յորոց մի էր իշխանաղուն Մնիսաղ Յովհաննէսն Զաքարեան երկայնաբազուկ Երզրութեանց Բադրատունի։ Պ. Պետրոս Շանչեանց՝ ուսեալն ընդ օտար աստեղօք՝ հակառակ համարեցաւ իւրոյ ա. խորժակացն զխորհրդակցութիւնն, ուստի եւ չկամեցաւ խորհրդակցօք վարել զպաշ-

տօնն զայն՝ ասելով ես չկամիմ զոք խորհրդական։ Ներսէս Աթոռղիկոսն պատասխանի արար նմա թէ՝ ես ինքնս Աթոռղիկոս գոլով՝ առանց խորհրդականաց ոչ կամիմ մնալ, իսկ դու՝ եթէ զմիայնութիւն կամիս՝ ինձ չէ հաճոյական, վասն այսորիկ 'ի չհաւանութենէ յայսմանէ Պ. Պետրոսն ոչ ընկալաւ 'ի նոյն պաշտօն, ուստի եւ վերադարձաւ 'ի Ս. Պետերբուրգ, ուր ընակէր, որպէս գրէ վասն այսորիկ Պ. Եհափառ Աթոռղիկոսն Ներսէս առ Ազայիսն Դաւթեան գերաշնուականն՝ 'ի 1850 ամի, փետրվարի 24, համար 47, 'ի Թիֆլիզ, այսպէս.

„Ներսէս ծառայ Քրիստոսի . . . աղ-
„նուական Պետրոսն Սամուէլեան Շանշ-
„եանց, որոյ աղդասիրական յոյսն առա-
„ւել էր 'ի ձեզ եւ 'ի մեզ յոյժ պակաս գը-
„տաւ, զի բաց յինքենէ ոչ զոք կամելով
„ունիլ գործակից վասն ուսումնարանի կա-
„ռավարութեանց, 'ի կամիլն մեր ունիլ
„վասն օգտակարացն ուսումնարանի զնո-
„ցին պայծառափայլութիւն Անիազ Խվա-
„նէ Աղրութինակի, զաշնուական Դա-
„ւիթ Գրիգորեան Խիրոդինեաց եւ զնո-
„ցոդ հաստատեալն յաշնուական զԳէ-
„որգ Մանդինեանց, Ս. Գէորգ Մուշնի

« անուանեալ եկեղեցւոյ, նա թողեալ զիւր
« պաշտօնն ուսուցչական կառավարու-
« թեանց յայնմ ուսումնարանի հայոց՝ հը-
« բաժարեալ յամենայնէ զնաց 'ի տուն իւր.
« եւ թէ՝ զի՞նչ է պատճառ այսպիսի ա-
« ռաձնական տեսչութեամբ միայնակ յо-
« ժարելոյն նորա կառավարելոյ զուսում.
« նարանն եւ զբաղմութիւնն աշակերտաց
« եւ զմասնակից զոք չունելոյ աղագաւ
« ըստ մերում նախամտածութեանց մեզ
« յայտնի եղելոց՝ բացէ 'ի բաց հրաժար-
« մանն, մեք չկարողացանք նշմարել ինչ
« առիթ շահաբեր կամ վայելչական, եւ
« վասն այսորիկ թողաք զնա երթալ զհետ
« կամաց իւրոց։ . . . . նորին աղնուակա-
« նութեանն՝ Պետրոս սիրականին մեր եւ
« ձեր՝ խոստացայ զի թէ խօսեցեալ ռո-
« ճիկն վասն նորա հինգ հարիւր ռուբլի
« արծաթոյ սակաւ իցէ վասն իւր, տա-
« ցի հազար ռուբլի արծաթոյ, եւ հաւա-
« տարիմ բանիւ խօսեցայ առաջի ոմանց
« գտանեցելոց առ մեզ 'ի մերում սե-
« նեկի, զի զոր ինչ եւ ինքն կամեսցէ վա-
« սըն անձին իւրում՝ առանց խնայելոյ ու-
« նիմ տալ ինքեան. այլ չեղեւ համոզել
« զնա 'ի կամն մեր, եւ ես առանց պատ-
« ճառի ոչ ետուք նախահոգութեանց

« չկամեցայ յանձնել նմա միայնակ զայն.
« պիսի ուսումնարան բազմաթիւ մանկանց
« 'ի սմին ժամանակի ուսումնարանական
« դրութեանց ։ »

Ուսակիցք Պ. Շանշեանցի, որպէս յարձակեցան 'ի վերայ իմ զոր ունիմ դրել 'ի սորեւ, նոյնպէս յարձակեցան եւ 'ի վերայ երջանկայիշատակ Հայրապետին 'Ներսիսի՝ երբ ոչ ընկալաւ զնա 'ի նոյն պաշտօն, եւ թելադրութեամբ սատանայի անսուտադիր եւ աղճատ դրութեամբ ընկրան նախատակոծ առնել զ Հայրապետն, զոր 'Նորին վերհատուցիչն առեալ գրբէ յիւրում կոնդակի առ ազնուական Աղա 'Դաւիթն Խիրոդինեանց 'ի Տփղիս 'ի 1849 ամի 7 յունվարի համար 9 ըստ այսմ.

. . . . . Առ այս ամենայն մեք նախ « յայտնեմք Ձեզ զի լցեալ անարդ բանիւք « գրութիւնմի, որ առաքեալ էին առ մեզ « այսի 'ի Թիֆլիզոյ, յայնմ լրբենի անբըզ- « գամական գրութեան տան եւ մէկ թեր- « թովք վասն իմում անձին եւ գործոց « բազմաթիւ անարդ բառս նշանակելով՝ « անդոսնելի ցուցանել ախորժեն զչինու- « թիւնն պարսպի գերեզմանատան Հայ- « վասարայ 'ի ձեռն . . . . Մերոյի, զչի- « նութիւնն մեր ասա 'ի սուրբ Աթոռն

« Պ.օմշակէօլ եւ Մայրագոմանուանելով.
« Ի՞թոռոց արդիւնքն ջրի պէս խաբելով
« կամելոց եմ նաեւ չինել յամթոռն հաղար
« մկանց ուսումնարան, քան թէ հաղար
« մանկանց 'ի միջի մոծակացն Աջմիածնի.
« յորժամ ուսումնարանն եղեալ 'ի Թիֆ
« լիզ խափանեալ, ես ինքն կամիմ այժմ
« խաբել զլսողն, թէ չինեմ ես ուսում.
« նարան հաղար մանկանց, զոր չէ չինեալ
« ուրեք ուսումնարան հաղար մանկանց
« Այսրն Ասուսաց. դիտեմ ես չափազանց
« սիրել եւ չափազանց ատել փոսն փորու
« արժանաւորութեանց եւ անարժանու
« թեանց . . . : Զար սովորութիւնդ քա
« զաքականութիւն քեզ համարեալ, զԸզ
« ւելի կեղծաւորութիւնդ, մարդահաճու
« թիւնդ, որ մեծաց եւ փոքունց Հայոց
« եղեւ սարջանք զի ընարեցին զքեզ Կա
« թողիկոս ինքեանց, նորասաւոր կեղծա
« ւորութեամբ կաւալէր ձդած . . . այն
« ինչ Խանումի տունիկը վաղ տալիս, աջ
« ուձախ նասեցրած Կարապետ եպիսկո
« պոսին Աղաջնորդ եւ Մինաս Ղ ալպա
« ջանին : Ամանոր առելի եւս չարաբա
« նութեամբ դրեալն անարժան համա
« րիմ օրինակել . . . : Խորհուրդ տամք
« քեզ 'ի բաց վարել 'ի Վ եհարանէդ Ըզ

« դեռաղաղուղայ անձինս . Ի՞նչմիածին եղ-
« եալ դիանականքն են Շ՞ահխաթունեան
« եպիսկոպոսն , Աբել վարդապետն Սէթ-
« եան , Յովսէփ վարդապետն Ռժշկեան .
« իսկ 'ի Թիֆլիզ եղեալքն երկու եղբարք-
« քն Արզանեանք , Սարգիս վարդապե-
« տն Ղ՞ալաչեանց , Առաքել վարժապե-
« տն Աբրահամեան , Յակովբ վարժապետ
« Պարինեանց , Գ՞ալուստն Շ՞իրմազան-
« եանց , սուտ Հրիտտոսի որդի Մ՞ելքայէ-
« լին, որոնցմով շատ բան կարես առնել . . . :

« . . . . Այժմ դու ինքն ակամատես
« եղեր դառնաղէտ գրութեան քո ուսումն-
« նարանին , եւ քո ձեռամբդ քակեցեր
« զեղեալն եւ արտաքս հաներ զուսու-
« ցիչսն եւ զուսանողսն որպէս թէ լաւ եւս
« ունիս քարեկարգել զնա , եւ ահա՛ տե-
« սանի 'ի միջի նորա բազմեալ յաթոռ
« դատաւորակութեան երէկեան տրմուղ
« համբակաց , որ վոխանակ լուսաւորելոյ
« զուրացուցանել ունին զաղորմելի մանկը-
« տին խորին տգիտութեամբ խրեանց եւ
« պէս պէս մոլորութեամբք . . . . : »

« Զայս ամենայն օրինակել ոչ ձանձ-
« բացայ , զի լաւ եւս տեղեկացցիս վասն ա-
« մենայն դրութեանց եւ խօսից այլոց
« վասն սորա կամ վասն նորա , որոց 'ի

« կարդի դասնի եւ անուն Ձեր , որոյ ա-
« ղաղաւ եւս աւելի եւ յառաջ վարելով
« զչարաբանութիւն իւր դրողն տասն եւ
« մի թերթովք զչարաբանութիւն իւր վա-
« սին իմ եւ վասն նշանակելոցն յիւրումն
« դրութեան , յաւելու նաեւ 'ի վերայ այ-
« նոցիկ թէ « ահա այնոքիկ անուշունք ընդ-
« դառանց քոյ մոլեկան ախտից 'ի հան-
« դէս առ մատուցեալ յուսամք , որպէս
« զլեղին ձկան , զոր օծանէ Տուբիա յա-
« չքս կուրացեալ հօրն իւրոյ 'ի ծրտից ա-
« ռաստաղաբնակ ծիծառանց՝ անկան կեղե-
« ւանք յաչաց նորա եւ եռեռս , նման նը-
« մին բացցին եւ քո աչք շլացեալք 'ի
« բազմաշնաս ծրտից չարամիտ եւ նեն-
« դապատիր՝ լեղուաց Մ՝ենասայ , Նիկո-
« զայոսի , Ա՝ արդանայ , Սահառունեոյ եւ
« այլոց չարաձին սերմանց սատանայի եւ
« այլն , եւայլն , եւայլն . լի անարդական
« չարաբանութեամբ ըստ դրեցելումն թէ՝
« Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի
« եւ թոյնք խժից 'ի ներքոյ շրթանց նո-
« ցա . . . . . »

Յետ ժամանակաց ինչ Աղայֆօն Դաւ-
թեան հայ իշխան որ 'ի Ս . Պետերբուրգ,
գրէ անտի առ Դաւիթն Թամամշեանց 'ի
Տփխիս , 'ի հարկէ ըստ թախանձանաց նո-

ին Պ. Շ՝ անշեանցի, եւ նա առ Պ. Ա՝ ա-
սակեանցն՝ որ վարէր զպաշտօն Պրոկու-
ռորութեան յԷջմիածին, զի միջնորդ եղ-
եալ առ Ա՝ եհափառն վերատին ընդունել
տացէ զՊ. Պետրոսն 'ի նոյն պաշտօն։ Պ.
Ա՝ ասակեանցն միջնորդէ բանիւ թուամա-
շեանցին եւ Կաթողիկոսն բարեհաճի առ-
այն, բայց այնու պայմանաւ զի պատուե-
լին այն կատարեսցէ զամենայն գործս պաշ-
տաման խորհրդակցօք եւ ոչ բնաւ մէն
միայնակ, որպէս նայն կամէր, եւ այս դը-
րութիւն Ա՝ ասակեանցի դատանի արդէն
'ի գործս Տփխոյ ուսումնարանին։ Ա՝ եր-
ջապէս Պ. Պետրոսն վերադարձեալ ըն-
դունի զպաշտօնն. իսկ 'ի 1854 ամի փո-
խանորդ Փոխարքային Պովկասու Տ. Բեա-
դրն 'ի ձեռն քաղաքապետին տայ տեղե-
կութիւն Կաթողիկոսին 'ի ժամանակի պաշ-
տօնակալութեան Շ՝ անշեանցի թէ 'ի ձե-
ռամ ուսումնարանի շարունակի դասաստ-
ութիւն ընդդէմ կրօնի Ձեր եւ ընդդէմ
տերութեան, արդեօք զիտա՞կ էք եւ
դուք, եւ կամ թէ թոյլատրութեամբ ձե-
ռո՞վ լինի թէ ոչ. հետեւաբար Կաթողիկո-
սն կոչէ առ ինքն զհոդաբարձուս ուսում-
նարանին, եւ յետ զայրանալոյ 'ի մէջ բերէ
եւ զայս թէ ես զամենայն աւուրս կենաց

իմոց եւ ժողովուրդն իմ լեալ եմք հաւատարիմ առ տէրութիւնն եւ հաստատունք 'ի կրօնս, զի՞նչ է այս զի լսի ձայն ապստամբութեան եւ նոր վարդապետութեան 'ի մերում ուսումնարանի։ Այն այս վատահամբաւութիւն եղեւ պատճառ զի Պաթողիկոսն խափանեաց զուսումնարանն եւ զհետ եղեւ դրել զկանոնադրութիւնս որով վարել ունէր ուսումնարանն աներ-կեւան։ Պ՝ասն այսր բանի ուսումնարանն զամս երիս մնաց դրեթէ խափանեալ, եւ հետզհետէ հաստատեին 'ի Տփխիսոյ 'ի ձեռն հաւատարմաց դրով եւ բանիւ դարձեալ նոյնպիսի անախորժ համբաւք, վասն որոյ պարտաւորեալ 'Այորին վեհափառութիւնն դրէ զայսոսիկ կոնդակս առ հոգաբարձութիւնն, առաջին 'ի 13 օգոստոսի 1855 ամի 'ի սուրբ Էջմիածին համար 183։

« 'Ներսէս ծառայ Քրիստոսի . . . .
« հոգաբարձութեան 'Ներսիսեան ուսումնարանին Տ՝այոց Տփխիսու . . . . որպէս
« խոստացաք Ձերում աղնուականութեանց
« թէ շուտով ունիմք դարձուցանել առ
« ձեզ 'ի Թիֆլիզ զհարազատն սրբոյ եկեղ-
« ղեցւոյ հայրենեաց եւ մեր ամենայն մի-
« տանութեանց մերազանց զՍարգիս զԸ-
« նորհազարդ եպիսկոպոսն, թէպէտ եւ

« համաձայն մերում խոստմանց ոչ անա-
« դան ձեռնադրեալ զնա Եպիսկոպոս
« պատրաստեցաք զնա յաղագս վերադար-
« ձուցանելոյ առաջնորդական պարտաւո-
« րութեամբ, այլ զի նորին պայծառա-
« փայլութիւնն Պնէտազ Ա. ասիլ Յովսէփ.
« եան Ռեհբուտեանց զդրութիւն մեր առ
« Ս՝ինիսորն ոչ կամեցեալ առաքել՝ ինքն
« դարձուցեալ էր առ մեզ եւ գրեալ զի
« առաքեսցուք առ Նորին բարձր գերա-
« զանցութիւնն Նիկոլայ Նիկոլայիվիչ
« Մուրավիէվ Տ. Փոխարքայն որ գտանի
« ՝ի բացակայութեան իւրով ամենահար-
« կաւոր ծանր զբաղանօք . . . : Բայց ա-
« ռաւել զգալի գտանէ մեզ զի լսելի լինին
« ՝ի հասարակական համբաւոց չշնչիւնք ոչ
« պատկանեալ ուսումնարանաց հայկազանց,
« իբրեւ թէ տկարութեամբ գիտութեանց
« Ուսումնարանութիւնք կամ այլ շա-
« բադրութիւնք նախնեաց Հայոց չեն այն-
« պէս կատարեալք, որպէս են կատարեալ-
« գործեալ յամենայն Եւրոպայ կամ մանա-
« ւանդ ՝ի Գերմանիա, ուր հարիւրաւոր ա-
« մօք հռովմէական ամբարիշտ քարոզչացն
« էին գայթակղութիւնք անուսումն, այլ
« Բրիստոսեան աստուածային վարդապե-
« տութեամբ առաքինացեալ աղգաց բազ-

« մաց դայթակղութիւն ընդ ամենայն տե-
« ղիս . իսկ ոչ 'ի վաղուց ժամանակաց ա-
« ռաւել քան զնոցայն սկզբնաւորեցին եւ-
« բոպայական ուսուցչութեանց դայթակ-
« ղութիւնք Լուտերականաց եւ Կալ-
« մանացւոց , որպէս ոչ 'ի վաղուց յայտ-
« նեցեալն 'ի Պարապաղ եւ 'ի մերձաւոր
« ժամանակաց հետէ յամենայն սահմանս
« տէրութեան Օսմանցւոց , նա իսկ եւ 'ի
« Պ . Պոլիս , եւ իբրեւ ոչ անհաւատի
« բաւական հաչակաւորութեամբ նաեւ 'ի
« Շամախի քաղաքի , մի՛ եւ մի՛ արաս-
« ցէ ամենակատար ուսուցիչն հաւա-
« տոյ Աստուած մեր թոյլատրութիւն այն-
« պիսեաց դայթակղեցուցչաց մերազանց
« 'ի Քրիստոսապատուէր առաքելական
« վարդապետութեանց սրբոց լուսաւորչա-
« ցըն իւրեանց Թադէոսի եւ Բարթու-
« մէոսի եւ սրբոյն Գրիգորի Պարթեւի ;
« Որպէս մծտայն հաղուստի եւ այլ իրաց,
« այնպէս եւ հաւատոյ մծտայն գտանի սի-
« ռելի անձնահաւան ընկերցասիրաց , բայց
« մի է ճշմարտութիւն հաւատոյ , այն՝ զոր
« պատուիրեաց Տէրն մեր Յիսուս Քրի-
« ստոս ուսուցանել ամենեցուն եւ զոր
« ուսուցին նոքա մինչեւ ցմահանաստումն
« բաղմաթիւ հաւատոյ , յորմէ պահեսցէ

« Տէր Աստուած մեր զմեզ եւ զամենայն
« ազգն Հայոց ։ Եւ այս ինքն է պատճառ,
« զի ի մասին ուսումնական ընթացից ի
« մերում ուսումնարանի՝ ընտրելագոյն հա-
« մարիմ սպասել մինչ ցառաքումն Սար-
« գիս սրբազան Եպիսկոպոսի ։ »

Եղինպէս ի 27 օգոստոսի նոյն ամի
գրէ առ նոյն հոգաբարձուն համար 205 ։

« Ընկալեալ զտոմսակն առ մեզ ի 12
« սոյն օգոստոսի եւ ծանուցեալ վասն տա-
« ղակուսանացն ձերոյ ի մասին ոչ համա-
« ձայն խոստման մերում ձեզ վերադար-
« ձուցանել զՍարգիս Եպիսկոպոսն Ջ-ա-
« լալեանց վասն օժանդակելոյ ձեզ ի մա-
« սին նորոգ առ ի մէնջ կարգադրութեան-
« ցըն յաղագս ուսումնարանի մերոյ , հա-
« մաձայն մերում անօրէնութեանց ուսու-
« ցանելոյ ըստ այնոցիկ նպատակաց մի առ
« մի նշանակեցելոց առ ի մէնջ այնմիկ նո-
« րոգ կարգադրութեանն մերում, այլ զի
« ստիպեալ ի հարկէ բարուոքելոյ զկառա-
« վարութիւն հոգեւորական ատենից յան-
« ձին եղելոց վերադիտողութեանց Սինոդի
« Եչմիածնի . . . պարտաւորեցաք զՍար-
« գիս Եպիսկոպոսն Ջալալեանց կարգել
« վերաքննիչ որպիսաբար դործավարու-
« թեանցն վիճակային Պոնտիսաորիային Ն-

« բեւանու . . . . եւ յուսով եմք թէ ոչ
« եւս անագան աւարտեալ զքննութիւն
« սոյն Պոնսիատորիայի առաքեցուքի գոր-
« ծակցութիւն ձեզ եւ Պանսիատորիայի
« Ս. բաստանի եւ Իմերէթիոյ զվարձ առ-
« եալ հարազատն սրբոյ Եկեղեցւոյ եւ աղ-
« գի Հայոց եւ մեր զԱրդիս եպիսկո-
« պոսն Ջ. ալալեանց . . . . . միայն այժմ
« այսու ծանուցանեմք Ձերում աղնուա-
« կանութեանց զի լսելի լինի մեզ լուր ա-
« նարժան մերում եկեղեցական ուսում
« նարանի , իբրեւ զի յառաջադէմ աշա-
« կերտք ուսումնարանի անհաւանք գտա-
« նին գրութեանց գերարժան հեղինակաց
« Հայոց Գրիգորի Նարեկացւոյ , Ներ-
« սիսի Շնորհալւոյ , նա իսկ եւ Սաղմո-
« սարանաց Դաւթի եւ այլոց հիմանց ե-
« կեղեցւոյ Քրիստոսի հրաշաբան Աստ-
« ուածաբանութեանց եւս եւ կրօնի կու-
« սական կարգաց եպիսկոպոսութեանց եւ
« վարդապետութեանց եւ այլոց եկեղեցա-
« կան զանազան կարգադրութեանց եւս
« եւ աղօթից եւ ճգնաւորական վարուց
« . . . . վասն որոյ խնդրեմ հանճարաւոր
« ուշադրութեամբ գտանիլ նորահայեաց ,
« թէ ընդէ՞ր իցեն տարածեալ այսպիսի ա-
« նարժան մերում ուսումնարանի չարա-

«համբաւ լուրք, եւ մեք հոդ կալցուք
«փութացուցանել զՍարգիս սրբազան Ե-
«պիսկոպոսն յաղագս ապահովացուցանել
«լոյս զմեզ եւ զձեզ եւ զամենասուրբ Ա-
«ռաքելական եկեղեցի Հայոց։»

Եւ յետ դրելոյ զայսոսիկ կոնդակն, ուր ուրեմն զկնի բազմօրեայ ճիգն թափելոյ անձանձիր աշխատելոյ ընդ ընդհանրական գործառնութիւնս տայ զկանոնադրութիւնս իւր, զի այնու վարեսցին ամենայն դասատուութիւնքն եւ դասատուքքն, եւ 'ի նմին կանոնադրութեան խրատիւ՝ արդեալ զի դասատուութիւնն քրիստոնէական վարդապետութեան մի լիցի 'ի ձեռադիր տետրակս, զոր Պ. Շանշեանցն գրէր եւ ուսուցանէր. սակայն կարգադրութիւնս այս ոչ հաւան դտաւ Պ. Շանշեանցին. իսկ Ալթուղիկոսն եւս ոչ եթող զնա 'ի կամս իւր, եւ յայսոցիկ անհամաձայնութեանց մնաց ուսումնարանն դարձեալ 'ի խանգարեալ դրութեան։ Եւ խօսեցայ անդամ մի թէ՝ Ա. Եհատառ Տէր, թոյլատրեցէք նմա զի կամ՝ ըստ իւրումն ցանկութեանց շարունակեսցէ՝, կամ հրաժարեցուցէք զնա 'ի նմին պաշտօնէ. պատասխանեաց երանելին. «Միրեկա՛ն, եղբայր նորա է մի 'ի պատուականադոյն

անդամոց աղղիս Հայոց եւ ինձ յոյժ սի-
րելի. ո՛չ հրաժարեցուցից զնա, բայց եւ ոչ
թողից ըստ կամաց նորա շարունակել զու-
սումն. թող ինքին զդասեալ հրաժարես-
ցի 'ի նմին պաշտօնէ. եւ այսպէս 'ի տա-
կաւ յամեցման եկաց մինչ ցմահ Հայրա-
պետին. յետ այնորիկ, հոգաբարձուք ու-
սումնարանին բարեսրտութեամբ ստիպե-
ցին զիս, որպէս թէ լուեալ 'ի Հայրապե-
տէն զՀաճութիւն նորա 'ի կենդանութեան
նորին զկարգմանէ Պ. Շանչեանցի 'ի նոյն
պաշտօն տալ զվկայութիւն, որպէս զի ինք-
եանք կարգեսցեն զնա 'ի նոյն պաշտօն, ընդ-
բանս դալով թէ նա հանդերձեալ է գը-
նալ 'ի Ս. Պետերբուրգ, յետ երից ամսոց,
զի մի՛ ասեն ուսումնարանն կացցէ 'ի նը-
մին դրութեան։ Ցժուարին ինն էր յոժա-
րիլ 'ի խարհրդատուութիւնս նոցա, եւ յետ
երից աւուրց ընդ միտս ողորելոյ պարտա-
ւորեալ եմուս զվկայութիւն, որով եւ կար-
գեցին զնա 'ի նոյն պաշտօն։ Յայսմ միջո-
ցի դէպ եղեւ ինձ գնալ 'ի Ս. Էջմիածին
եւ յամենալ անդ զամիս ութ. նա Պ.
Շանչեանցն գտեալ էր զժամանակ յաջող
եւ արարեալ որպէս զիսէրն, ոչ եւս դառ-
նալով 'ի Ս. Պետերբուրգ։ Եւ այն ինչ
վերադարձայ առաջնորդական պաշտօնիս

եւ զննեցի զոր զուսումնարանն յողբալի դրութեան, ՝ի նկատի ունելով զերկոսին կոնդակն Տ՝ որին վերհսիաւութեան, յորում պարզապէս երեւի թէ ՝ի նմին ուսումնարանի լինի դասատուութիւն ընդդէմ կրօնի հայրենի եկեղեցւոյ մերոյ եւ մանաւանդ քննիչ էի այնմ գործոյ, թէ եւ ՝ի կենդանութեան Տ՝ որին սրբութեան չեղէ վերահասու, գոնէ զկնի մահուանն պարտէի զգուշանալ. Յակոբ վարդապետն եւս դասատու նմին ուսումնարանի յայտնապէս հաստատէր, եւ զինքն եւս հրաւիրեալ էին ՝ի նմին ընկերութիւն, իսկ նա հրաժարեալ էր գլխովին ասելով՝ թէ եկեղեցին Հայոց չունի հնութիւն զինորոգեացի, եւ ինքն երդուեալ է լինել հաւատարիմ, երից եւ չորից կրկնեաց նա զայս առաջի հոգաբարձուաց. վասն որոյ ՝ի զգուշութիւն իմ այս եղեւ զի Պ. Հանչեանցն լիցի վերատեսուչ, բայց եւ ոչ ընդ նմին դասատու լրիատնէական վարդապետութեան, ըստ անտեղեակ դոլոյն նորա ՝ի լեզուագիտութեան Հայոց եւ ծիսից եւ կրօնից նորա՝ որպէս պահանջէ հարկն։

՝Ի վերջոյ երբ դիտաց Պ. Հանչեանցն, թէ ինքն այլ եւս ոչ կարէ ըստ կա-

մաց իւրոց լինիլ դասատու, հրաժարեալ
իւրովի գնայ ի Պ. Պետերբուրգ։ Հա-
այս եղեւ սկիզբն եւ պատճառ ծագման
ամենայն տարաձայնութեանց եւ աղաղա-
կաց ի կողմանէ ոմանց սիրելի երիտա-
սարդաց։ Յետ հետեւ տեսեալ նոցա զի
ճիգն իւրեանց ի դերեւ ելեալ եւ զօրու-
թիւն իւրեանց խարտակեալ եւ ոչ դտեալ
յաջողութիւն առ ոմն հարկանելոյ զկրօ-
նական մասն եկեղեցւոյ, եւ հնար իսկ չէր
երբ ազգն կարող լինէր զփարձ առնուլ
ՀԱՍԱԿԱՐ խորհրդոց նոցին, սկսան բու-
ծանել յինքեանս զմտաղձ դառնութեան ան-
խիղճ դաւադրութեամբ առ համարումն
անձին իմոյ եւ պատուոյ, ջանալ կորու-
սանել զփարկն՝ զոր ազգն ունէր առիս, եւ
հնարս հնարեցան առ ի հասանել յաջող-
ութիւն պատրուակեալ խորհրդոցն, զորոյ
ակնարեւ առաջի աչաց զկորուստն տեսա-
նէին. նոքա ծանրացաւումն եղեն ընդ իս,
զի թաքնաշրջիկ ընկերութեան իւրեանց ի
դիւրութիւն այսր հետապնդութեանց իւ-
րեանց ոչինչ ունէր օգնել, բայց եթէ ա-
ռատաւորութեամբ անուան իմոյ եւ հա-
ւատարմացուցանելով զանձինս իւրեանց
հասարակութեան ազգին, զի նոքաք որ-
սացին զանձն իմ ի կորուստ, եւ անաք-

գել յասպարէզ մատուցանն զբարի կարծեց-
եալ զընթացս իւրեանց, յուսանելոց դպրո-
ցաց զմանկուցն շրջել դիւրախաբ զմիտսն
յաղատութիւն ի հաղածիչն ազատութեան,
եւ արդարեւ կարողացան նոքա հասանիլ
ի կատար բաղձանաց իւրեանց, վաստա-
հաբաւելով զիս խորամանկութեամբ, որ-
սալով զմիտս պարզամիտ ժողովրդեանն։

Նոքա դիտակք էին զի ձայն Տ. Ներ-
սիսի հասեալ էր յունկն ամենեցուն յաղա-
գրս խնդ ջատագովութեանց եւ անձանձիր
մշակութեանց ազգի եւ եկեղեցւոյ, եւ
գիտէին եւս զի Ներսէս՝ մեծահանճար
առաքինական իշխանութեամբ իւրով սի-
րելի էր ազգին ի սէր առաւել եւ առա-
ւել քան զոր սիրեն հաւատարիմ որդիք
զբարի եւ զգորովալիր հարս իւրեանց.
ուստի առ ի լուծանել զկապն, ոչ անտես
յամենատեսութենէն Աստուծոյ, որով նա
զիս կապեալ էր ընդ ազգին եւ ընդ ինք-
եան, այնուհետեւ սկսան անսասրագիր
նամակօք եւ պատրուակեալ անուամբ գը-
րել եւ հրատարակել զիս իբրեւ թշնամի
կենաց Նորին Աստուածարեալ Սրբու-
թեան, անզուգական բարերարի իմոյ եւ
հոգեւոր ծնողի, եւ այն թելադրութեամբ
տերութեանն, ընդ նմին եւ թշնամի ազ-

գին երբեւ դարձուցիչ առ յունական ե-
կեղեցին. զայսոսիկ սոսկալի զրպարտու-
թիւնսն իւրեանց ըստ պատուիրանի անօրէն
Ա օրէնքին թէ որքան կարեւ զրպարտեա
զիշնամին քո, եթէ ոչ հաւատացեն, գո-
նէ ընդ կասկածանօք եկեսցեն։ Ի՞հա ճա-
նապարհ հնարից նոցա, զորոց զանուանսն
անարժան համարիմ 'ի յիշել, թէ եւ հե-
տեւեցան նոցա քանի մի անձինք արժա-
նաւորք, սակայն խաբեալք 'ի սուտակաս-
պաս եւ 'ի ձեւակերպեալ ձայնից ընտանի
թշնամեացն, զոր եւ ծանուցեալ նոցին իսկ
խաբելոցն ապաշաւեցան առ յապայ անա-
գան ուրեմն։ Ի՞պացոյց սրոյ են, զի յետ
հրաժարեցուցանելոյ տալոյ զիս 'ի պաշտօ-
նէ՝ աճապարեալ կոչեցին զԿ. Գեորգեան
Շանշեանց 'ի Ս. Գեոորբուրգայ եւ ե-
տուն կարգել վերատեսուչ ազգային ու-
սումնարանին Շուշւոյ ընդ նմին եւ զի-
բաւունս դասատուութեան քրիստոնէա-
կան վարդապետութեան, թէպէտ եւ յե-
տոյ 'Ներին վեհափառութիւնն հեռացոյց
զնա անտի յայտարարութեամբ Գէորգ
վարդապետի Ի՞բամեանց եւ տեղւոյն ժո-
ղովրդոյ, որպէս երեւի 'ի կնդակէ 'Ներ-
ին վեհափառութեան Տ. Ա՞ատթէոսի
Կաթուղիկոսի ամենայն Հայոց դրելոյ առ

ժողովուրդն Շուշայ 'ի 11 դեկտեմբերի 1864 ամի համար 587 ըստ այսմ.

« Մատթէոս ծառայ Աստուծոյ . . .
« համայն հաւատացեալ մերոսեռ ժողո-
« վրդեան բնակելոց 'ի Շուշի Աստուա-
« ծապահ քաղաք եւ յամենայն վիճակս
« նորին, սրբակրօն քահանայից, դերազ-
« նիւ իշխանաց, հաւատարիմ գործակա-
« լաց եւ երեցփոխանաց, ազնուազգի վա-
« ճառականաց, քաջահմուտ արուեստա-
« գիտաց, եւ առ հասարակ բարեպաշտօն
« քաղաքացեաց մեծաց եւ փոքունց, ա-
« ռանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց,
« ողջոյն քրիստոսաւանդ սիրոյ, յորմէ օրհ-
« նութիւն եւ քաղցրութիւն Աստուածային
« բազմապատիկ շնորհաց հեղեալ ծաւա-
« լեսցի 'ի հոգիս եւ 'ի կամս եւ 'ի սիրտս
« ամենեցուն ձեր, եւ հայցեսցուք մեք
« ընդ նմին զամենեսեան զձեզ 'ի բարիս
« կացեալ տեսանելով այն է յԱստուածա-
« հաճոյ իւրումն գործոց առաքինութիւնս
« եւ սրբութիւնս, վերաբերեալ հանցէ
« զձեզ եւ յետ յաստեռաց յանանց ուրա-
« խութիւն եւ 'ի մշանջենաւորն հանգիստ
« անսահման երանութեանց իւրոց, որում
« փառք եւ գոհութիւն յանդրաւ յաւիտ-
« եան, »

«Աստի աչաց ունելով մեր եւ սրտի
«զամենազգալի տառապակրութիւնս վա-
«սն զրկելոյ յեւ ժամանակաց ինչ ի վի-
«ճակաւոր Աստուորդէ ձերմէ, ընդ նը-
«մին զանափոփ վշտակրութիւնս ի խան-
«գարումն կարգաց ուսումնարանիդ վասն
«անճանոթ ոմանց իշխելոյ ի նմա գործով
«տեսչութեան եւ դասատուութեան ան-
«ողղափառ հոգւով եւ լի դառնութեամբ
«եւ լեզեաւ չարաղանդ բանից վարդա-
«պետութեամբ, վասն որոյ այսու կոն-
«դակաւ մերով ի վերայ իրաւանց ներ-
«գործութեանց եւ իշխանութեանց տե-
«ղապահ առաջնորդի կարգեցաք զՄը-
«կրտիչ արքեպիսկոպոսն Խաբաւանց եւ
«առաքեցաք առ ձեզ վասն ժամանակա-
«ւորապէս հովուութեան ցհասատատու-
«թիւն բարձրագոյն իշխանութեանն որոգ
«Աստուորդի, եւ քաջայոյս եմք զի նա
«ըստ բարեյուսութեան իւրոյ կարող եւ
«ջանակուռ լիցի ապահովացուցանել ըզ-
«հաւատարմութիւն հոգեւոր կառավա-
«րութեան տեղւոյդ եւ ուսումնարանին
«որով ակնկալութիւն ազգին լրանալ ունի
«բարեգէպ միջոցաք Նորին, այլ եւ հա-
«ւատի եմք թէ եւ ոչ հովուեսցէ զձեզ
«բարկութեան եւ ատելութեան երկիւ-

« զիւ , այլ համբերատարն սիրոյ խաղա-
« ղութեան , ոչ իբր տիրելով զիճակին ,
« այլ մանաւանդ անձամբ օրինակ կալով
« բարեպաշտութեան եւ քրիստոնէական
« առաքինութեանց Ձերոյ , Ջանադիր լի-
« նելով զհետ լինիլ ամենայնի բարեկար-
« գութեան հօտի Ձեր , 'ի գործ դնելով
« ընդ նմին ըստ աէրունական պատուիրա-
« նի զհեզ եւ զհամաձայն ճշմարիտ ոգ-
« ւոյն քրիստոնէական եղանակս խրատուց
« եւ յորդորանաց առ Ձեզ , խոյս տալով
« յամենայն խստութեանց , մարդահաճու-
« թեանց , եւ հեռուելով շաւղաց սրբա-
« զան վարդապետաց՝ 'ի հաստատութիւն
« եկեղեցւոյ , 'ի պայծառութիւն աշխի եւ
« 'ի մխիթարութիւն հօտիդ մերոյ Աստու-
« ծոյ : Իսկ եւ առ 'ի ձէնջ յուսամք հը-
« նազանդ լինիլ նմա յամենայնի եւ ճա-
« նաչել զամենայն իրաւունս եւ զօրէնս
« սիրոյ նորին , ոչ կալով ատահակ այնմ ա-
« մենայն պատուիրանաց որք Աստուածայ-
« նովք քարոզին Ձեզ , մի՛ մնիլ 'ի հակա-
« ռակութիւն բանից , յորոց յառաջ գայ-
« ցեն զանազան տարաձայնութիւնք շփո-
« թութիւնք եւ աղմուկք 'ի մէջ խաղա-
« ղութեան եւ սիրոյն համբուրի , զի եւ
« Աստուածն խաղաղութեան հանդիպեսցէ 'ի

«Զեզ յաւիտեան։

«Ա.յլ եւ ընդ նմին պատուէր աւան-
«դեցաք յիշեալ Ա.ռաջնորդին, մի զանց
«առնել քաղել զրո

« Ամենասիկ եւ ոչինչ երկբայելի է մեզ բա-
« ցածանոյց խօսիլ յունկս ձեր առ ի դի-
« տութիւն ճշմարտութեան, զի ըստ նոցին
« եւ ուսումնական ոմն Պետրոս Հանչ-
« եանց ասացեալ, որ եւ թիւր ի բանս
« հաւատոյ միաբան ունի յղացեալ զաշա-
« կերտս չարեաց յայլ ուրեք, ըստ նոցին
« եւ ի քաղաքիդ, վասն որոյ առաջադրե-
« ցաք նորին սրբազնութեան ի բաց ար-
« ձակեալ համարել զնա ի պաշտօնէ իւր-
« մէ, եւ կարդել ի տեղի նորա զայլ ոք
« զարժանահաւատ եւ կրօնագէտ քահա-
« նայ մի, որ ունի ուսուցանել նմա զ[illegible]որ-
« հրդաժութիւնն նշանաց եւ շնորհաց եւ
« խորհրդոց Արիստոտական սուրբ եկե-
« ղեցւոյ եւ կամ զուղեցոյցն Արիստոտական
« հաւատոյ զյօրինեցեալն ի մէջ եւ կամ
« զանբարապատում քրիստոնէական վար-
« դապետութիւնն Մասերայ Մադատրի,
« եւ ոչ միայն զյիշեալ անձն զատուցանել,
« այլ եւ զամենայն համախոհս նորին, զի
« մի փոքր ինչ խմբն զամենայն զանդուա-
« ծրն այլ եւս խմբեսցէ, որով շատ լիցի
« մեզ ի բոլորն եւ ի համայնաջինջ հրկի-
« զութենէ աղանդաւորութեան զհոդիս
« եւ զանձինս ոմանս եւ եթէ ապրեցուցա-
« նել, եւ փրկութեան լինել առիթ նոցա

« եւ մի՛ կորստեան, որոյ աղագաւ հա-
« մարս ունիմք տալ առաջի Աստուծոյ,
« ըստ բանի իւրում որ առ Եղեկիել մար-
« դարէ. «Որդի մարդոյ դեռ կացուցի ըզ-
« քեզ ՚ի վերայ տանդ Իսրայէլի, լուիցես
« յինէն պատգամ եւ սպառնասցիս նոցա
« իբրեւ յինէն, յորժամ ասիցեմ ցանս-
« ընէն եթէ մահու մեռանիցիս, եւ դու
« ոչ զգուշացուցանիցես նմա եւ ոչ խօսես-
« ցիս զգուշանալ անօրինին եւ դառնալ ՚ի
« ճանապարհաց իւրոց չարաց եւ կեալ ա-
« նօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի,
« եւ զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրե-
« ցից »։ Եւ ահաւասիկ հաւաստիք բանից
« մերոց ՚ի լոյս եկեսցեն նա եւ ամենե-
« ցուն ձեզ, զի լուեալ էր մեր ՚ի վաղուց
« հետէ վասն յիշեալ հեղինակին եւ դա-
« սատուին, թէ՝ այլ ընդ այլոյ զուղղու-
« թիւնս վարդապետութեանց եկեղեցւոյ
« մերոյ ընդլայնէ պատիր եւ չար խորհրդ-
« դովք մնաց հերձուածողութեան, սա-
« կայն այնքան ՚ի ճշմարիտն կարծիս ոչ մի-
« տէաք, նաեւ զանց զբազմաք առնէաք
« զոր զնմանէ խօսից եւ զրուցից, այլ իբ-
« րեւ ՚ի յայտ եկին կրօնական տեսարակք
« դասատուութեան նորին, դատեցաք զայն
« առաջի մտաւոր քանի մի անձանց ուսում-

« Նականաց եւ երկուց եպիսկոպոսաց վար-
« ժելոց յուսումն Աստուծոյ, յորում ե-
« ռեւեցան բազում վրիպակք բանից եւ
« խորհրդոց, զոր հայեին ստէպ 'ի մոլո-
« ռամիտ վարդապետութիւնս օտար առ 'ի
« մէնջ եկեղեցեաց, վասն որոյ հրաման եւ
« յայլ տեղիս առաքեցաք արդելու զգ-
« յիշեալ անձն միւսանգամ 'ի գործոց
« տեսչութեանց եւ դասատուութեանց
« յայլ ամենայն ուսումնարանս Հայոց։

« Զոր լերաք, եւ մեք եմք եւ մնամք
« բարեմտիւք առ Աստուած վասն կալոյ
« եւ մնալոյ Ձեզ 'ի ներքոյ միանձնեաւոր
« հովանաւորութեան Աջոյն իւրոյ բարձ-
« ելոյ, եւ անսասան հաստատոյն երկիւղիւ
« եւ սիրոյն շնորհօք հաստատեալ խաղաղ
« 'ի կեանս բարեյաջող եւ առատաւատ ահա-
« ճոյս'ի շինութիւնս Հոգւոյն սրբոյ զօրաց-
« եալ եւ քաջալերեալ։ »

'Այնպէս 'ի վերայ այսմ բանի նոյն
իսկ Կաթողիկոսն ամենայն Հայոց գրէ
առ զգ. 'Գատիրեանցն ըստ այսմ. « Զ'որ
« ժամ բարեպատեհ գտեալ տեսանելով
« 'ի ձէնջ զնոր հաստատս ճշմարիտ ազգա-
« սիրական զգացմանց ձերոյ արտայայ-
« տելոյ գրաւորապէս 'ի ձեռն մտերմաց
« ձեր եւ մեր, փութամք ծանուցանել զի

« մեք ըստ պարտաւորութեան մերում յոր-
« դորս կարդացաք. քանի. քանիցս Գ. Էորդ
« վարդապետի Ամրամեանց, մի՛ հրաժարիլ
« ի պաշտօնէն ոչ անագան հաւատացելոյ
« նմա բարձրագոյն կամաց, եւ որ ցանկա-
« լին էր մեզ այս՛ ըստ նորուն դեղեցիկ
« արժանաւորութեանց նմին։ Սակայն հա-
« մողանք բազմատեսակք ապարդիւնս մը-
« նացին առ նա, եւ նա թախանձանօք
« մեծաւ հրաժեշտ ընկալաւ յայնմանէ
« ըղձակալի փափաքանօք հոգեւոր ան-
« դորրութեան, զոր գտանէ նա յանկիւնս
« վանօրէից, զորոց զպայծառութեանն եւ
« զվերանորոգութեանց ձեռնարկութեամբ
« միայն նա համարի զինքն ապահով եւ
« ուրախ հոգւով չափ։ Ի վերջոյ եւ մեք
« հաճ եւ հաւան գտեալ ընդ բանս աղեր-
« սանաց նորա՝ թոյլատրեցաք ի կամս յո-
« ժարութեան վարիլ։

« Գոմանի աշխատութիւնք նորա եւ
« անձնագրաւ պաշտպանութիւն հաստա-
« տութեան անժխտելի աւանդութեանց
« եկեղեցւոյն մերոյ որոց ընդդէմ նեն-
« գաւոր դարանագործութեանց ոչխա-
« բաղդեստից ոմանց, որք ընդ պատրուա-
« կաւ առաքինութեան եւ բարոյականու-
« թեան դաստիարակութեան մանկանց

« Հայաշնչեցոյ, զորոմն տիրադրուժ մոլո-
« ութեան 'ի հոգիս նոցա տարրացուցա-
« նել դաղտադողի ճանապարհաւ նկրտե-
« ին, որոց անարկբայ հաւատիք զրա-
« ւորք 'ի յայտ ածան մեզ ահա, հանդի-
« սացան առաջի մեր 'ի մխիթարութիւն
« մեծ՝ մեզ եւ ամենայն ողջամիտ բարե-
« պաշտ ազգայնոցս։

« Յաւ է մեզ եւ վիշտ անհնարին տե-
« սանել 'ի հայաշինս մոլորութեամբ կրից
« յայլ կրօնս հակամիտեալս եւ զայլս 'ի
« նոյն մոլորաշաւիղ ընթացս որսալ թեւա-
« կոխել որոգայթադիր հնարադործու-
« թեամբ, զ՝Հայս ասեմ, որք զհուր, զը-
« դաւնութիւն տանջանաց եւ զխոշտան-
« գանս անհնարինս ընդ դարս դարս ար-
« համարհեալ արիական շահատակութեամբ
« վահան հաստատութեան եկեղեցւոյն
« կացին անդրդուելի եւ անդրժելի հա-
« ւատով։

« Յաւ է մեզ, այո՛, զնենդութեանն
« որոգայթ ընդ դեղեցիկ առաքինու-
« թեամբն ոգւոյ ազդասիրութեան բար-
« գաւաճութեան լուսաւորութեան տե-
« սանեմք սքօղեալ 'ի հոգի մոլորական
« հայազգ'ացս, մինչդեռ ուրախ էաք ընդ-
« փոյթ եւ ընդ ջանս նոցա, հարաղատ ըզ-

« գայթանց պատուղ միայն ճանաչելով զայնս
« ճշմարիտ հաւատարմութեան ։

« Պ·խոնարհ քաջ, զի Աստուածութիւն
« ձեր իբրեւ քաջ ախոյեան ընդդէմ ա-
« պերախտից այնոցունց ունիք զամենայն
« զկար եւ զզօրութիւն ի կիր արկանել
« իբրեւ որդի հարազատ սրբոյ եկեղեցւոյ
« Հայոց եւ իբրեւ նախանձախնդիր ան-
« դամ աղդիս գործովք բարութեան
« արդասաւորեալ, եւ այնու սիրելի զսիրտ
« մեր վշտացեալ հակակիր ներգործու-
« թեամբ խարդախամտաց, եւ մեք զօրաց-
« եալս ի ձեզ եւ ի հարազատս աղդին
« մարմնացուք զչարին խորտակել զբա-
« զուկ, որ ձեռնամուխ կալ վատահի յան-
« դգիժելի իրաւունս եկեղեցւոյն Հայաս-
« տանեայց ։

« Աստուծոյ անսերկմիտ յուսով մաղթելով
« ի վերայ ձեր եւ բարեպաշտուհի աղնիւ
« ամուսնոյ ձերում զառատաբուխ շնոր-
« հաց օրհնութեան հօրն ամենակալի ի
« բարեբաստիկ կենցաղավարութիւն հո-
« գեւոր եւ ի յաջողութիւնս ամենայն ա-
« ռաքինական գործոց ի վառս իւր եւ ի
« պայծառութիւն եկեղեցւոյն, ծանուցա-
« նեմք զի զանօրէնութենէ վասն եղանա-
« կի ընարութեան նորոյ հոգաբարձուաց

« հոգեւոր դպրոցի տեղւոյդ՝ կալաք ըղ-
« փոյթ ահա, արձակմամբ առանձին կոն-
« դակի առ ։ լիճակաւոր առաջնորդ թե-
« մին ապաստանելով նախամեծարութեամբ
« լմն 'ի կամն նորա զ'նորութեանն գործ
« ըստ իրաւանցն չնորհելոց անձնիւր վիճա-
« կաւորաց 'ի գործ դպրոցաց, եւ կարի
« իսկ իրաւամբ, զի փորձն ամենց երկոց ե-
« տուն մեզ զապացոյց անհերքելի, զնոյն
« կարգաց կալնուլ զեղանակ ։

« Յուսամք զառաւել արդիւնս տե-
« սանել 'ի նմա, քան թէ ապաստանու-
« թեամբ 'ի կամն տարակարծիք հասարա-
« կութեան, որոց միայն տարաձայն խոս-
« վութեանց լուրք եւ դրագրութիւնք
« տաղտկալիք վրդովեն զմեզ անդադար 'ի
« հոգի, եւ գործն կարեւոր մնայ ապար.
« դիւն արտաքոյ մերս եւ ազգին յուսոյ
« եւ ակնկալութեան ։ »

Սոյնպէս եւ Յակոբ վարժապետն Պարենեանց 'ի դրութեան իւրում առ Գէորգ վարդապետն Ալամանց գրէ.

« Եթէ երկրագործ ոք ակնալ զ'բնա-
« նիս յ'երկիր, խրախանայ 'ի հունձս ա-
« տաքաց'ալ բազմաբեր հասակաց, ընդէ՞ր
« ապա ոչ խրախուսցի եւ իմ սիրտ եւ հո-
« գի 'ի լուր սիրագործ քաջութեանց ան-

« ձանց երբեմն խմում տիարամիտ սակայն
« ճշմարիտ վարդապետութեան աշակերտե-
« լոց, եւ իմիջի սրոց դուք դուք նախընթաց
« դրօշակիր : Հաստատ բերան դոհութիւն
« վերնախնամատեսութեան, որ 'ի բարեաց
« նուաղեալ ժամանակիս յարուցանէ տա-
« կաւին զանձինս, որք զվարուս աշխարհի
« եւ ճոխութեան եւ զամենայն ինչ 'ի զոհ
« բերեն անդորրութեան խղճի իւրեանց եւ
« յօգուտ ազգի եւ եկեղեցւոյ : 'Ի դրու-
« թեանց ձերոց առ ճշմարիտ հայ ազգ. '

« քունի դահ , եկեղեցին պարտի ունիլ
« զտեղի ամենայնի . նա պարտի լինիլ կեդ-
« րոն նորին միութեան եւ ապագայ նորին
« գոյութեան ։ Ա.Մ. ա՛ւաղ եւ ահա ներքին
« եւ արտաքին թշնամիք ական հատանեն
« ընդ նովաւ , մեք տեսանեմք զայդ եւ
« յումպէտս լինիմք , եւ յայնժամ միայն
« ՝ի յուշ գամք , երբ յամէն կուսէ խար-
« խաշեալ հիմանց միակ եւ եթ մերումա-
« պատանի՝ թաղեցէ զմեզ ընդ իւրաք
« փլատակաւ , բանամք յայնժամ զաչս մեր,
« այլ յարատեւել միայն թէ կործանեցաւ
« եկեղեցին հայոց, անհետ եղեւ եւ անուն
« Հայկական ։ Ներանելի էք դուք , եւ որք
« պաշտպան կացին խորհրդոց ձերոց , ա-
« նուն ձեր եւ նոցա ոսկի տառիւք դրոշ-
« մելոց են ՝ի պատմութեան աղգին , ուս-
« տի իբրեւ նիւթ պատմութեան եւ իբ-
« րեւ առարկայ խելամտութեան տողես-
« ցին եւ իմ հակիրճ բանք ։

« Ոչ անյայտ ձեզ զի այդ խմբի չա-
« ղութեան եկեալ ՝ի Հիւսիսոյ սկիզբն
« կալաւ առ մեզ յաւուրս հանգուցեալ
« Հայրապետին Ներսէսի . ՝ի զուր էին ա-
« մենայն կերպարանափոխ հնարք թագու-
« ցանելոյ զայն , որպէս աչք հանգուցե-
« ալն ՝ի խոր թափանցէին եւ խաժուռ հա-

« յեցուածքը նորա միայն զամենեսեան 'ի
« սարսափ բերէին, ուստի եւ դարձեալ
« դործութիւնք նորասիրաց կային կան-
« դաղեալ իբրեւ զհուր ընդ դաղխաւ.
« վախճան եհաս կենաց նորա, նոքա իրա-
« դործել կամեցան զդաղտիար մնաց իւր-
« եանց. բայց եւ այժմ յարեան խոչըն-
« դուք, Սարդիս եպիսկոպոսն եւ Դաւ-
« թիել վարդապետ Աչիլազովկի, արք հղօր
« 'ի բան եւ 'ի դիր, արք խորագէտք եւ
« կաղղք ամենայնի. զի՞նչ այժմ պարտ է
« առնել՝ խորհեցան նոքա. պարտ է բուռն
« հարկանել զհնարից նախ զհղօրն կապելոյ,
« եւ ապա զսուն նորա աւար հարկանելոյ,
« եւ զի ըստ վարդապետութեան նոցա եւ
« ամենայն չարադործաց՝ նպատակն որբէ
« զամենայն յանցանս, ուստի սկսան զա-
« մենայն չարիս կուտել 'ի վերայ նոցա, զրբ-
« պարտելով, հայհոյելով, բամբասելով,
« զմին կոչելով ռուսաստր, մարդասպան
« չարաբարոյ, իսկ զմիւսն նոյնպէս հակա-
« մէտ առ ռուսս, առ կաթոլիկութիւն,
« անհնազանդ իշխանութեան եւ այլն եւ
« այլն. միով բանիւ, զի թիւրեալ զազգս մեր
« եւ արդելու հարկս տալ կայսեր։ Ա՛հ, ցաւ
« է ինձ, զի եւ ես թերեւս եւ դուք եւ
« այլք բազում միանձնաբար ցաւակից եմք

« եղեալ դաւաճանիցդ այդոցիկ բանիւ եւ
« գործով։

« Ի վերջոյ յայնոքեցաւ նոցա կատա-
« րել զկամս իւրեանց. վարդապետարանք
» մեր տուան ի ձեռս նոցա, հրաման կա-
« ցեցան բերանք եւ լեզուք, եւ որք վրա-
« տահանային ճիգն հանել ընդդէմ նոցա՝
« արկանէին ընդ կասկածանօք. անտառ-
« ըադիր նամակք յաճախեցին, չմնացին չա-
« րիք որք ոչ գործեցան, ըստ որում նը-
« պատակն արբէ զամենայն։

« Եւ ահա յայնմիկ ժամանակի դուք
« ճշմարիք վարդապետ, խաչանիշ դրօշ ի
« ձեռին՝ հրապարակաւ ի յայտ ածիք զա-
« մենայն թագուցեալ որոգայթս որոմեա-
« ցանիցդ այդոցիկ ի կործանումն ազգի եւ
« եկեղեցւոյ։ Ա՛յժմ եւս ննջեին մեռելու-
« թեան է նշանակ, այժմ պարտ է քաջ դի-
« տել, զի շառաւիղք դոցա ձգին ի ծովէ
« մինչեւ ի ծով։ Ա՛յժմ պարտ է հատու լի-
« նել, զի զորոց դէրքա քսիս ամբաստանու-
« թեան մատուցանեն եւ զամենայն հնար-
« իւք թեւակոխեն եւ եւս արատաւորել
« զնոսա, են անձինք պիտանիք եւ ազգի
« եւ եկեղեցւոյ, իսկ վասն նոցա դահիճք
« խափանարարք յառաջիմութեան իւր-
« եանց մատաց, զոր ուխտեալ են յառաջ

« վարել ըստ ամենայն հնարից, ըստ որում
« նպատակն սրբէ զամենայն։

« Զամ է արդ քաջ դիտել, թէ Հայք
« ոչ ռուսանան եւ ոչ կաթոլիկանան, այլ
« յայն յեղափոխին, յորում ըստ վարդա-
« պետութեան նորասիրաց ամփոփեալ
« պահին վասն մեր եւ երկրաւոր թագա-
« ւորութիւն երկրաւոր օժանդակութեամբ
« կրօնակցաց նոր ընդունելի կրօնի, եւ
« երկնաւոր օժանդակութեամբ հաւատոց
« առանց բարի գործոց՝ զնորարան վար-
« դապետութիւն կործանիչ ազգի եւ ե-
» կեղեցւոյ. զյարդ բարւոյն զոր ոք ունի՝
« քաջ ճանաչէ երբ կորնչի։ Զ.յս օրինակ
« մեղրամիտ վարդապետութեամբ եւ սը-
« նոտի յուսով պատրեցին երբեմն զժողո-
« վուրդն Իսրայէլի նորասէրք ոմանք, յա-
« ղուցին զժողովուրդն ընդդէմ տիրող
« ազգին, գկծեցուցին զսիրոտ տիրողաց եւ
« այնու ածին յինքեանս զբարկութիւն Զ.ս-
« տուծոյ եւ մարդկան, յանկանգնելի կոր-
« ծանումն իւրեանց ցայսօր ժամանակի։

« Զ.ս ոյք խցեն հնարք զառաջս առ-
« նելոյ այսոցիկ աղետից, ըստ իմ կար-
« ծեաց մի միայն ճար է միաբանութիւն ա-
« մենայն ճշմարիտ ազգասիրաց, հոգեւոր
« բականաց եւ աշխարհականաց, թողուլ

« միմեանց դյանցանս որ առ միմեանս,
« կոչել յասպարէզ եւ զամենայն քանքա-
« ռաւոր հոգեւորականս, խրախուսել ըզ-
« նոսա, քաջալերել, նաեւ ազաչել առ 'ի
« գործ գնել զքանքար իւրեանց յօգուտ
« եւ 'ի պահպանութիւն ազգի եւ եկեղե-
« ցւոյ։ Թող կորիցեն գրաքը եւ գրաքա-
« կան հաշիւք, գիւրաւ մարթէ լինել ըզ-
« տեղի նոցա եթէ գոյ ազգն։ Այսուհե-
« տեւ պարտ է գիտել զի որք ցանկան ըզ-
« կործանումն անձին՝ որ իւրովք քանքա-
« ռովք կարէ զառաջս առնուլ նոր ազան-
« գաւորութեան, են 'ի թուոյ տարածո-
« ղաց զայն վարդապետութիւն, դիմակա-
« ւորեալ յայլ կերպարան, սատանայ 'ի
« կերպարանս օձի։ Ի վերջոյ միաբան աղա-
« չեսցուք զ'Աստուած ասելով. « դա՛ր-
« հայեա՛ց յերկնից եւ տե՛ս, ա՛յց արա
« այգեւոյս այսմիկ եւ դարմնան տար սմա՝
« զոր անկեաց ամ քոյ եւ այլն։ »

Յաւ է ինձ մերկանալ զառականս ազ-
գին, զոր ստիպեմն 'ի կարգ արկանել բա-
նիս հանդամանօրէն յաղագս տարօրինակ
ներգործութեանց յառաջացելոց յանգա-
ւեմիտ սրտից ոմանց հոգեւորականաց. ա-
պա թէ ոչ, ոչն դատապարտելի գրախօ-
սութիւնք մերոյիշատակեալ անձանց միով

հարուածով արդարութեան ունէին դլորիլ եւ անհետանալ 'ի վիհս կորստեան՝ եթէ չէին դտեալ իւրեանց զօրավիդն դնախանձ եւ զստեղութիւն կարդակից խնամոց եղբարց ամենց, որ մեծն էր եւ ճշմարտիւթ, զորով պարտիմ դալ ասասանօր՝ 'ի հիմանց անտի երեւեցուցեալ զբանն եւ զպատճառ ձեռնտուութեան նոցա հակառակորդացն խնամոց։

Մինչեւ էր եղեալ յաշխարհէ կաթողիկոսն 'Ղերսէս, յաճախ առ ինքն կոչէր զմիաբանսն Ղ.Ջմիածնի, զամենեսին առ հաստատակ յանձանձէր, խնամէր, խրատէր եւ ջանայր ուսուցանել նոցա զեղջանակ եւ զկերպ ծառայութեան աղդի եւ եկեղեցւոյ, զպարտաւորութիւնս պաշտաման իւրեանց դնելով առաջի նոցա. յայսպիսում հանդիսի առաջի բոլոր միաբանութեան զառաջնաւորսն 'ի նոցանէ յանդիմանէր վասն անհաւատարիմ ընթացից նոցա յորոց սակիպիւր այնպէս առնելն, եւ իրատական բանիւք տայր նոցա օրինակ զանարժանութիւնս իմ. այնպիսի յանդիմանութիւնք առ նոսա եւ դովասանութիւնք առ անարժանս այնպէս զարթոյց եւ դրդռեաց 'ի նոսա դնախանձ, մինչեւ անդամ Ղուկաս Եպիսկոպոսն չհան-

դուրժեալ այլ եւս, ակն յանդիման դունա-
թափ սպառնալեօք ասաց թէ « հալպաթ
քու կաշին մէկ օր մեր տաբախանէն կդայ » .
'ի հարկէ անշուշտ գիտէի թէ լինելոց է
այն՝ եթէ կենդանի մնայի զկնի մահուան
Տ. 'Ներսիսի . վասն որոյ մատեաց առ 'Ն-
րին վեհափառութիւնն եւ խնդրեցի խո-
նարհաբար արչդուել զիս առաջի նոցա, պատ-
ճառելով թէ նոքա ունին նախանձիլ ընդ-
իս . պատասխանեաց 'Ն որին վեհ Սրբու-
թիւնն . « Տօ՛ օրհնած , ի՞նչ կարող են առ-
նել քեզ . 'Դաւիթ ասէ « Ն՛ոքեցեր զայնո-
սիկ ոչ.ք պահեն զերկիւղ 'ի մտոտիս . զի՛նչ
արարին ինձ՝ զնոյն առնելոց են եւ քեզ » :
Իսկ թէ զի՛նչ արարին նոքա , պարզապէս
գրէ Յովհան Պօղոսեան Օ. Միւռնայի ի 1835
ամի 'ի Պալեթիա :

« 'Ներսէս եպիսկոպոսն վասն արժա-
« նաւորութեան իւրոյ պատուական լինէր
« երբեմն առաջի ազնուականաց , մանա-
« ւանդ կուսակալին ի Թուխիլիդ դահակից
« սիրելութեամբ եւ անխտիր երիտասարդու-
« թեամբ զամն բազումս . եւ զի՝ պատա-
« հեցաւ նոքա 'ի գալն Յերուսաղեմ . վատա-
« ցաւ , զի յանցաւոր դատաւ այլն այնպիսի .
« ոչ նա ինքն է անձնադիր ջատագովն եւ
« ընտիր սիրելի մեծի կայսերն Ռուսաց .

եկեալ յԵրեւան անհարազատ երեւեցաւ ,
« զաւաճան երեւեցաւ Լթոռոյ նորա . ոչ
« ապաքէն զժոխաբոյծ նախանձն տիրա-
« պետեալ սրտի Յոհաննու Կարբեցւոյ ,
« ընդ դեղեցիկ յառաջադիմութիւն նորա
« հեղձամղձուկ առնէր զնա անհանդիստ
« վարանմամբ . կարծէր թէ՝ նա ունի ժա-
« ռանգել զաթոռ կաթողիկոսութեան ,
« որում ինքն էր հեռամուտ . վասն որոյ
« յանհնարին մախանս բերեալ կուրացոյց
« զաչս քաղաքապետին Երեւանու կաշա-
« ռօք , զի եւ նա չէր հաճեալ ընդ պա-
« տիւ Երսխսի զոր ունէր նա 'ի Կայս-
« րէն . . . . եւ միաբանեալ գրեցին գիր
« գանգատանաց զ'Երսխսէ առ Կայսրն ,
« որպէս թէ նենդութեամբ ելն խորհուրդ
« 'ի մտի ունէցի նա ընդդէմ Կայսերն ,
« կամեցեալ հաստատել թագաւորութիւն
« 'ի մէջ Հայոց . եւ զգիրն զայն եւ սոռ-
« բագրել Կարբեցի Յոհաննէս համախո-
« հից իւրոց եւ 'ի ձեռն քաղաքապետին
« սլացաւ գիրն այն առանց թուղթ եւ ե-
« հաս յարքայանիստ Ռուսաց , եւ այն-
« պէս նախանձաբեկն Կարբեցի Յոհան-
« նէս եւ այլ նմանք նորա թուղթին ըզ-
« Երսխս եպիսկոպոսն 'ի Հայաստան աշ-
« խարհէ , զի արձակ արձակ ծառայեսցեն

« ախտից իւրեանց » ։ Տես զի մարդասէրութիւն նորա կատարեցաւ արդարեւ , զի՝նչ արարին ընդ նմա , արարին նոյնպէս եւ ընդ իս ։

Ի վերջոյ ըստ գրութեան Մինիստրին նախարարութեան նեղբին դարձոյ՝ պարտ էր Տորին վերհսկաւորութեան լրացուցանել զպակասեալ թիւ անդամոց Սինոդին Էջմիածնի . բայց ոչ կամէր , վասն զի ոչ դատանէր զընդունակ անձինս նմին պաշտօնի ։ Ընդամ մի գնացի առ նա , եցոյց ինձ զգրութիւն Մինիստրին եւ ցաւագդացութեամբ ասաց . « Մինիստրն միշտ գրէ առ իս կարդալ զանդամն Սինոդին , բայց ոչ գիտէ թէ զո՛վ ունիմ զի կարդեցից » . Պատասխանեցի « վերհսկաւոր Տէր , կարծիք է բաղմաց թէ դուք չկարդելով զանդամն՝ կամիք նուազեցուցանել զզօրութիւն Սինոդին , զի մի երբէք կարասցէ Սինոդն հակառակել ձեզ . ուրեմն առ՝իրառնալ զայդ զլիսի մնոտի կարծիս՝ բարեհաճեցէք կարդել զո՛ եւ կամիք » ։ Դարձուցեալ առ իս զքաջակշիռ հայեցուածս իւր ասէ . « Տո՛ օրհնած , ես կամիմ՝ զի երկու վեսասակարքն ազգի եւ եկեղեցւոյ եւ Էջմիածնայ անհետասցին ՝ի դժոխս , դու կամիս լրացուցանել զթիւ անդամոցն » ։

Պատասխանեցի. «Այ Եհափառ Տէր, եթէ այդպէս երկմիտ է՝ ես յօժարեցայց լինել անդամ Սինոդին սրբոյ Էջմիածնի»։ Այլայլեն յիս միտք իմ եւ հոգի ի Հոգին սուրբ, զի այնպիսի անսահման խին ուրախութեամբ եցոյց ակորժանս եւ դորովալից բերկրանս հաճութեան, մինչ զի կենդանուոյն կերպարանան առաջի իմ լիալիր քաղցրութիւնք սրտի նորա եւ անմոռաց պատկառանօք մշտակարօտ բերկրութեամբ ընտն զոգի իմ յիշատակութիւնքն այնոքիկ։ Ի սմին խօսակցութեան մուտ առ մեզ Ստեփանոս Սամուէլեանց, որ եւ խօսեցաւ զբաղումս համանձայն իմոց բանից։ Այ Եհափառն խնդոյն հրամայեաց մեզ երկոցունցս գնալ եւ ընտրել զորս եւ կամիմք յանդամակցութիւն Սինոդին. եւ մեք գնացեալ նշանակեցաք զՅովհաննէս վարդապետն, զՅուսիկ որ վարդապետն, զՅէորդ վարդապետն, որք այժմ եպիսկոպոսացեալք եւ զՍարգիս վարդապետն. յայսմանեցաք Նորին սրբութեան զնշանակեցեալսն եւ նա գրեալ զանունս նոցա եւ ըստ պատշաճին անօրինեալ խնդոյն առաքեաց առ Սինիսարն ի հաստատութիւն. իսկ ի հետեւեալ օրն յանկարծ հրամայեաց Նորին Եհափառութ-

թիւնն անդամոց Ամենոդին թէ « Դուք ցանկայիք կարդել զանդամակիցս , ահա՛ կարդեցի , յորոց մի է եւ Սարդիսն Ջաղաղանց. բայց զանուանս միւսոցն ոչ յայտնեաց . չդիտեմ որպիսի՛ անտանելի սրբոտմբոտութեամբ դեղնեցան ի լսել զանուն Սարդսի ։

Ամսանօր առաւել բորբոքեցաւ նախանձն ի նոսա , եւ կամն այսր ընարութեան դրեցին առանձին՝ որպէս լսելի եղեւ՝ զանդատագիր , յորում անարժան համարին զայն ընարութիւն՝ մանաւանդ վասն իմ , իբր այն թէ ի ժամ ձեռնադրութեանս իմում յեպիսկոպոսութիւն՝ չեմ երդուեալ յանուն Այսոր զհաւատարմութիւն ։

Ջինի մահուան երանելւոյն Ներսիսի , անդէն առ նմին ի յայտ եկին թագուցեալ վրէժխնդրութիւնք , զոր ես արդարեւ առաջի աչաց ունէի . յարեան ի վերայ իմ հալածանք բազում . եդիտ իւր ճարակ նախանձն մահաթոյն զանձն Սարգսի , եւ սկսան յառաջամատոյց լինիլ եւ բորբոքել այնուհետեւ ի դաղտխածածկոյթ թագստենէ ։ Երբ եհաս համբաւ հանդստեան Հայրապետին ի Ս . Էջմիածին եւ պատրաստեցան անդրէն դալ եւ

տանիլ զմարմին Տ֊որին սրբութեան, Մի֊նոգն Լ֊ՀՄիածնի գրեաց առ իս եւ յայտ֊նեաց զի Մ֊ակար եպիսկոպոսն մատուցէ զպատարագն, եւ նա ինքն խօսեցի յա֊տենի զբանս քարոզութեան 'ի պատիւ հանդուցելոյն։ Զ֊Հաղ գիտէր սրբազան Ղ֊ուկաս արքեպիսկոպոսն թէ ես եւ Մ֊ա֊կար եպիսկոպոսն զորպիսի՛ հաճարուն ու֊նէաք առ հանդուցեալն. ուրեմն չէր ար֊ժան արդեօք զի մին ի մէնջ մատուցանէր զպատարագ, եւ միւսն տայր զ֊քարոզ֊բայց ո՛չ, զի ես այնուհետեւ խորթացայ եւ օտար եղէ, եւ ամենայն անձնամաշ ծառայութիւնք իմ Սուրբ Լ֊ՀՄիածնայ, աղգի եւ եկեղեցւոյ՝ ծածկեցան ընդ վա֊բագուրաւ անցայսուութեան. սակայն վիշտ մեծ, զի Մ֊ակար եպիսկոպոսն պատճա֊ռելով զակարութիւն անձին, ո՛չ զպատա֊բագ մատուցանել կամեցաւ եւ ո՛չ զհան֊դուցելոյն յիշեցուցանել զերախտիս. ու֊րեմն եւ Տ֊երախտն անհետացեալ էր յի֊շատակ, չէր արժան նա այնուհետեւ ո՛չ որդիական շնորհապարտութեան եւ ո՛չ ե֊բախատաղխական անմոռացութեանց եւ պատուոյ։ Տ֊ուիրական մարմին նորա ընդ֊եալ էր անխօսուն 'ի դագաղի՝ հատեալ 'ի սարսափեցուցիչ ձայնէն. վասն որոյ պարտ

էր նմա մնալ առանց հանդիսի պատարագին եւ առանց յիշատակելոյ 'ի մեծագործութիւնն, այլ ես յակամայիս մատուցի զպատարագն եւ քահանայ մի ես զբարոյ։ Յետ աւարտման ժամերգութեան ելաք զգեստաւորեալ վասն ուղեւորելոյ զդի հանդուցելոյն. Մակար արքեպիսկոպոսն ուղեւորեաց ցմերձաւոր հրապարակ քաղաքին եւ անտի դարձաւ 'ի տուն։ Մի էր ապա տէր հանդուցելոյն, եւ ոմ պարտ էր հանդիսիւ եւ շքեղութեամբ յուղարկաւոր լինիլ նմա յարտաքս 'ի քաղմանարդ քաղաքին, 'ի հարկէ Սինօդն՝ որ արդելեալ էր զիս յիրաւանց միջամուխ լինելոյ. սակայն իմէր հոգեւոր ծնող՝ որ պատուելոյն էր, վասն որոյ այնպիսի եկեղեցական զգեստիւք 'ի տղմաշաղախ ուղեւորութեան ընթացայ ասպարէզս Լրիս մինչեւ արտաքս քաղաքին եւ անտի ուղեւորեցի զնա 'ի ձեռն վարդապետաց։

Մակար արքեպիսկոպոսն 'ի հետեւեալ օրն հաղիւ ելանէ 'ի քաղաքէն եւ գընացեալ հասանէ հանդուցելոյն 'ի Թէլէթ, որ հեռի անկանի 'ի քաղաքէն տասնեւութ ասպարիզաւ. եւ անտի հասանի յԷջմիածին եւ ցուցանէ զինէն գանդատանս եւ անշնորհակալութիւնս. բայց թէ ընդ

ն՝ , չգիտեմ. յետ այնորիկ 'ի միտ բերե-
լով զեղբարցն Յովսեփայ զկիրս եւ զդէր-
գիս 'ի սիրոյ Աստուածային , խուսափել
կամելով 'ի խռովութեանց յարուցելոց
յեղբարց իմոց 'ի վերայ իմ 'ի բունեալ
նախանձուէ , առանց ընդ այլ ինչ խոր-
հուրդս գալոյ՝ գրեցի առ տեղակալ Ռո-
կաս արքեպիսկոպոսն զամենայն խորհրդա-
ծութիւնս իմ , ասելով նմա . « Սրբազան
Տա՛յր , ես կամիմ առանձնանալ 'ի վանս
ինչ եւ խաղաղ մեկուսանալ , եւ այս ո՛չ յեր-
կիւղէ իմէ՛ , ըստ որում չունիմ ես կաս-
կածանս առ դործառնութիւնս իմ , այլ
չկամիմ լինել առիթ խռովութեան եւ ան-
բաւականութեան . եթէ ունիք դուք կաս-
կածանս ինչ զինէն կամ վարելոց է՛ք ընդ
իս ո՛չ ըստ պատկանելոյն , ապա որպէս եւ
կամիք կառավարեցէ՛ք զաղդն եւ եկեղե-
ցին , եւ կառավարութիւնքդ որքան եւ
բարի եւ Աստուածահաճոյ , նոյնքան ու-
րախութիւն եւ զուարճութիւն իմում սրբ-
տի . իսկ եթէ ըստ օրինակի հօր պարտիք
վարել ընդ իս , ուրախութեամբ եկից եւ
ծառայեցիս ընդ ձեզ աղդին ամենայն սի-
րով եւ հաւատարմութեամբ , զորօրինակ
ծառայեալ եմ ցայսմայր ժամանակի . » Ի
պատասխանի գրութեան իմոյ գրէ առ իս

Նորին բարձր սրբազնութիւնն ըստ այսմ, համբէ եւ կոչէ զիս ի ծառայութիւն ա-սելով. «Առաւել քան զձեզ զմի ունիմ քաջափորձ ի գործս, վասն որոյ հրաւի-րեմ զձեզ ոչ մեկուսանալ ուրեք, այլ փու-թալ եւ գալ ի ծառայել ազգին»։ Զհա-սոյն այս գրութիւն նորա եղեւ առիթ ինձ մտանելոյ ի պաշտօն. եւ որովհետեւ Նո-րին վեհափառութիւնն Տ. Գերասիմ կան-խաւ առաջարկեալ էր վասն իմ զառաջ-նորդութիւն Տփխոյ, եւ նոյն դիր նո-րա էր առ Փոխարքայն դեռ եւս առանց առաջարկութեան, վասն որոյ ի վերայ հիման այնր գրութեան եւ ըստ խնդրա-նաց ժողովրդոյ, Փոխարքայն Մոսկաստ-կամեցաւ առաջարկել եւ հաստատել զիս յառաջնորդութեան Տփխոյ՝ առանց հարցանելոյ զԱնձն. սակայն ես ոչ կա-մեցայ լինել առանց դիտութեան Էջմիած-նի, եւ ի ձեռն բարեկամաց յոյսանեցի զի հաւասար ընդ այլոց նշանակեսցեն զիս պաշտօնակատար մինչեւ ցդալուստ Կա-թողիկոսին, եւ ապա Կաթողիկոսն զո՛ եւ կամեսցի ընտրեսցէ յառաջնորդութիւն Վրաստանի։ Ինքն ես ժամանակ զի ընտ-րեցաւ Կաթողիկոսն, եւ Մակար արքե-պիսկոպոսն ընտրեցաւ գնալ ընդ առաջ

նորա 'ի հրաւիրակ. եկն 'ի Ցիլիկիա Մակար արք-եպիսկոպոսն, եւ պատուով եւ մեծապանծ ընկալեալ եղեւ յինէն իբրեւ յեղբօրէ, ուրանօր շրջապատեալ զնա աղգասէր անուանեալ ազգայամիտքն, չիք կարծեմ տարակոյս զի եւ նոքա ունէին հեղուլ յերկրումունս մնայ նորա նորանոր արուեստակութիւնս, հանդերձ խոստմամբ առաջնորդութեան։

Զարհին Մակար ուղեւորեցաք 'ի Պոլիս, եւ թէ զի՛նչ անդր պատահէք նմա եւ թէ յի՛նչ գործսն պատուիրանօք վարեալ, չգիտեմ. միայն թէ ծառ 'ի պտղոյն եւ այր 'ի վաստակոցն ծանիցին։ Երբ Սաթուղիկոսն եհաս 'ի Փոքրի եւ ես ընդ առաջ ելի նմա, նա՝ որ զկնի առ իրեարս ունելոյ ծանօթութիւն նամակագրութեան՝ բարեկամէր ինձ սերտ սիրով, եւ 'ի գրաւոր խօսակցութեան իւրում առանց «աչացս լոյս» բառի ոչ զբանսն յօդէր, եւ զբերբեւս թէ ձեր առ իս սէր եւ իմ հարազատութիւն առ ձեզ յուսամ զուգակշիռ դոլ ըստ ամենայնի, յո՛րպիսի հարկեցուցիչ պատճառանաց ստիպեցաւ յընդունելութեան իւրում խեթիւ հայել առ իս, օրինակ իմն եթէ հայեսցի ոք 'ի յանցաւորս եւ 'ի պատժապարտս։

Ղանապարհորդեցաք զՆորին վեհափառութիւնն 'ի Տփխիս, եւ՝ ս աչօք իւրովք զուսումնարանն յինէն կարգաւորեալ 'ի Ռութայիս, 'ի Սուրամ, 'ի Գօրի, նոյնպէս եւ զշինուածս ուսումնարանին, զմեծածախս կրպակսն, զծիրանաւորսն, ոչ յումեքէ լուաւ դանդատանս վասն իմ, բաց 'ի քանի միանձնահաճ երիտասարդաց եւ այն յաղագս ուսումնարանական դրծոց, եւ երբ ինքն հաւանեցաւ եւ դոլեաց, ուրեմն ոչինչ մնաց այնուհետեւ կասկածանք. զի եթէ ուսումնարանն բարեկարգէր, ուրեմն ամբաստանողքն սուտք էին. եւ երբ աւարտեալ զընթացս ուղեւորութեան վիճակին Ս՝ բաստանու եւանէր դէպ Յ՝Չմիածին, Ս՝ակար արք եպիսկոպոսն յայտնեաց 'Նորին վեհափառութեան թէ «Ս՝ ենհափա՛ռ տէր, չնորհակալութեանց պէտք են, զի 'ի միոյ ծայրէ ցմիւս ծայրն վիճակի սորա անցաք, եւ ոչ ուստեք լուաք բամբասանս կամ դանդատանս». ուրեմն, բաց յայսմանէ զի՛նչ պարծանք առաջնորդի ումեք, եւ այն այնմ վիճակի՝ յորում յամենայն ժամանակի չէն պակասեալ դանդատանք եւ բողոք զառաջնորդաց իւրեանց. նոյնպէս եւ այժմ յընթացս կաթողիկոսութեան սորին ակն յանդիման

դիղեալ կան զանազան անդոսնելի դան
դասք զառաջնորդաց իւրեանց եւ զդոր
ծավարաց. բայց ե՞րբ երեւեցաւ բողոք
ինչ կամ զրկանք յինէն առ աղգն կամ
առ եկեղեցին, թող ցուցցեն հրապա-
բակաւ եւ նոքաւ զիս դատապարտես-
ցեն չարաչար եւ անիծնայ։ Ոմանք յա-
ռաջաւոր անձանց թէպէտ լաւապէս դի-
տէին թէ չիք ինչ արատ 'ի գործողութիւ-
նըս իմ բայց յանձնադիր եւ անձանձիր
արդիւնաւոր մշակութեանց վասն աղգի եւ
եկեղեցւոյ, սակայն զիա՞րդ կարէին զու-
զիրն յայտնել, երբ սէրն եւ նախանձն 'ի
սկզբանէ անտի կոյր ճանաչին. զի զոր սիրէ
ոք, զամենայն աղգաւնաս գործողութիւ-
նըս նորա ոչ տեսանէ, եւ զոր ատէ ոք՝
զոգտակարութիւնս նորա նշմարել չկա-
րէ, այլ յաւէտ վերարկուաւ նախան-
ձու ծածկէ. եւ այսպէս բանիւք բազմօք
վշտացուցին առիս զ՝այրապետն եւ ար-
մատացուցին 'ի նմա զատելութիւն մեծ.
դիւրանսացն լինել նմա եւ վաղվաղկոտ 'ի
հաւատալ չէր ինչ յանհնարիցն սակի. միայն
թէ չդտեալ զապացոյցս եւ զառիթս յու-
զելոյ, զնոյն անընդհատ զդործ ուսումնա-
բանին Ցփխիսու զօրավիդ ինքեանց համա-
բեցան 'ի մէջ բերելով զհաշիւս եւ զկառա-

վարութիւնս նորա ըստ կանխակորհուրդ աշխատութեանց դաւաճանողացն. ուստի զԱտենադպիր Սինոդին առաքեցին 'ի հաշուետուութիւն եւ զիս կոչեցին յԷջմիածին, որպէս զի բացակայութեամբ իմով թերութիւն ինչ երեւեսցի 'ի հաշիւսն հոդաբարձութեան, զի նովաւ զիս դատապարտեալ արձակեսցեն 'ի պաշտօնէ։

Ատենադպիր Սինոդին վերահասութեամբ պատուաւոր եւ իշխան արանց քննեալ զհաշիւսն եւ վերադարձեալ մատոյց Սինոդին շնորհակալութեամբ հանդերձ, յայտնելով 'ի նմին գրութեան զուղղութենէ եւ զդրութենէ ուսումնարանին ըստ պատշաճին։ Այնուհետեւ այս առաջին նեռ խորամանկութեան արձակեալ յաղէզանէ նոխանձու՝ ընդ վայր էանց եւ ոչինչ ինասել կարաց։

Այլ զերկրորդն կամեցան լարել ընդդէմ. դրել եռուն առաքել զիս 'ի Պոլիս, որով եւ հրաժարեցուցանել զիս 'ի պաշտօնէս. հաճեցայ ես ընդ գնալն, բայց միամեայ ժամանակաւ, եւ 'ի տեղի իմ ընտրեցի զՊրիգոր վարդապետն Սադինեանց, վասն զի տակաւին չէի ձեռնամուխ լեալ 'ի շինութիւն Առաջնորդարանի եւ պարապի վանայն եւ այլոց պատշաճաւոր

չինութեանց, զոր ախորժանօք կամէի ա-
ւարտել եւ ցուցանել զծառայութիւն իմ
ազգին իմոյ սիրեցելոյ. վասն որոյ ոչ խա-
պառ հրաժարիլ կամեցայ. եւ երբ տեսին
թէ այսու եւս ոչ հրաժարիմ կամովին եւ
չկարացին արկանել 'ի ծուղակ, յեւս կա-
ցին առ ժամանակ մի, պահելով զխորհուր-
դըս իւրեանց 'ի խորին լռութեան. ասա
եւս նեռ նոցա արձակեալ յաղեղանէ նա-
խանձու 'ի նանիր եւ ոչինչ ՇՇասեաց.
հուսկ ուրեմն դրեալ իմ նամակ ինչ ծա-
նուցի 'Ներին վերհսկաւութեան թէ գործ
ուսումնարանին պատրուակ իմն են 'ի ձե-
ռըս նոցա առ 'ի հասանել նպատակաց իւր-
եանց. ընդ նմին եւ այլ հարկաւոր զանա-
զան ծանօթութիւնս աղդօդուտս, թէ-
պէտ եւ ակն ունէի զի անդծելի լինելոց
էր վահան ճշմարտութեան 'ի ձեռն իրա-
ւարարի, բայց ցաւ, զի վոխանակ հոդե-
ւոր եւ բարեզդաց աղդեցութեան, կոչել
ետուն զիս դարձեալ ՅԵրմիածին, թէ ո՛ր-
պէս սպառնալեօք տաժանելի իրաց են 'ի
յայտ ածել, եւ առանց ինչ բանս հարցա-
նելոյ ստիպեցին զիս տալ զհրաժարական:
Յօժարեցայ ընդ այն, այնու պայմանաւ,
զի տացեն ինձ զփոքրիկ վիճակն Սանահնի
վանայ, զտուեալն եւ զհաստատեալն 'ի թա-

գաւորաց Հայոց, Պարսից եւ Վրաց, եւ 'ի կաթուղիկոսաց վաւերացեալ մինչեւ ցկաթուղիկոսն Յովհաննէս, ուրանօր կարող եղեց կառուցանել ուսումնարան ժառանգաւորաց, բանալ տպագրատուն եւ 'ի լոյս ընծայել զհին մատեանս նախնեաց եւ այլ ազգօգուտ երկս աշխատանաց, յորմէ անշուշտ յուսայի հասուցանել գիտուն եւ բարի հովիւս վասն ազգի եւ եկեղեցւոյ. ծանրութիւն ծախուց 'ի վերայ իմ էր, միայն՝ վիճակն կարէր մատակարարել զմանաւոր մնունդ աշակերտելոցն։ Հաճեցաւ կաթուղիկոսն, սակայն նոքա խափանեցին եւ զայն։ Ի միջոցիս յայսմիկ եկն գրութիւն 'ի Փոխարքայէն զի դարձուցէ զիս 'ի Տփխիս. ընդ նմին իշխանք եւ քաղաքացի հասարակութիւնն գրեցին եւ զեկուցին կաթուղիկոսին զիսկութիւն խառնաձայն շփոթութեանց եւ զանսաստրագիր գրողացն զդատապարտելի նամականին, եւ խնդրեցին զդարձն իմ փութով առ ինքեանս։ Կաթուղիկոսն վերստին առաքեաց զիս 'ի Տփխիս. եւ ապա խօսի ընդ ապա Գրիգորի Մալինեանց. «զի՞նչ ասարիս ասէ, զի սոքա ոչ թողուն զիս 'ի հանդարտութեան. ապա թէ ոչ զի՞նչ չար արարեալ է Սարգիս եպիսկոպոսն, զի փո-

խեցեց զնա 'ի վիճակէն »։ Այս անդամ՝ եւ զարձեալ 'ի դերեւ եկ նեա արձակեալ յաղերսանէ նախանձու։ Թէպէտ ես վերագարձայ 'ի Տիւսիա, բայց այնպէս, որպէս թէ նաւավար ոք կացեալ յանդիմնաւու, որոյ իւրաքանչիւր նաւաստիք յամենայն ուստեք հակառակ հողմոց բացցեն զառագաստս ուրոյն ուրոյն. քան զի զոս ես պատուել կամիմ վասն արժանաւորութեան՝ նոքա պատժել տային, եւ զոր ես ըստ յանցանացն պատժել կամիմ՝ նոքա պատուել տային, եւ յամենայն յընթացս մարտադիր բանսարկութեամբ եւ բամբասանօք յարուցանէին դրդիռ եւ անբաւականութիւն։ Յայսպիսի վրդովմունս այլ եւս անհնարին էր ինձ տանել կամ գործել. գործ ինչ աղգօգուտ. վասն որոյ գրեցի զհրաժարականն իմ յամսեանն յունվարի 1861 ամի, եւ խոստացայ յամսեանն ապրիլի գնալ Մէջմիածին յանձնելով զիս 'ի կամս Տրին վերհսկաւութեան։ Իսկ նա չէր հաճեալ ընդ այն, այլ վերատին առաջարկեալ էր Պայսեր 'ի հաստատութիւն յառաջնորդութեան. թէ եւ յառաջն հաստատեալ էր զիս Պայսրն, բայց 'ի փոխանորդութիւն ցգալն Պատրուղիկոսին։

Սակայն ոչ յաջողեցաւ շինել թիւն տա-

կեցան յամենայն եկեղեցիս նոյն մոա-
խաբքն, եւ զորս ինքեանք կամեցան՝ ըզ-
նոյնս ընտրեցին. եւ վասն առաւել հաճե-
լի եւ ընդունակ առնելոյ զժողովն իւր-
եանց, ժողովեցան 'ի դուռն Երեմիայ Գէ-
որգեան Երծրունեաց արդարեւ առն ակա-
նաւորի, եւ զնա կացուցին զլուսիւրեանց.
գրեաց նա ինքն Երծրունին իւրով մեծա-
հանճար հեռատեսութեամբ վայելուչ եւ
պատկանաւոր կարգադրութիւն, արդա-
րեւ յոյժ զգուշաւոր եւ համաձայն մոաց
հանգուցեալ Հայրապետին 'Սերսիսի. բայց
երբ ընկալան զհաճութիւն 'ի Կաթուղի-
կոսէն վասն առաքելոյ զնոյն կարգադրու-
թիւն 'ի հաստատութիւն, բաժանեցան
յերկուս հաւասար դասս, վասն զի լաւա-
պէս գիտացին թէ՝ նոյն կարգադրութիւն
հակառակ է ներքին կամաց իւրեանց եւ
դլխահար, եւ ոչ երբէք յառաջ վարել կա-
րեն զգիտաւորութիւնս իւրեանց։ Երծ-
րունին ծանուցեալ զմիտս նոցա հեռացաւ
հանդերձ պատուաւորօքն, եւ ես անհա-
մաձայն դասայ 'ի խորհուրդս ժողովոյ Ե-
ղիտասարդացն. ապա եկն Մակար արքե-
պիսկոպոսն առ մեզ ուր էր եւ Պ. Ղէք-
սանդր Թոյլրեանց, որ հոգաբարձու էր
ուսումնարանին, եւ ասաց ցիս. «զքեզ

կեցան յամենայն եկեղեցիս նոյն մտա-
խաբքն, եւ զորս ինքեանք կամեցան՝ ըզ-
նոյնս ընտրեցին. եւ վասն առաւել հաճե-
լի եւ ընդունակ առնելոյ զժողովն իւր-
եանց, ժողովեցան 'ի դուռն Երեմիայ Գ-
ողգեան Աբծրունւոյ արդարեւ առն ակա-
նաւորի, եւ զնա կացուցին գլուխ իւրեանց.
գրեաց նա ինքն Աբծրունին իւրով մեծա-
հանճար հեռատեսութեամբ վայելուչ եւ
պատկանաւոր կարգադրութիւն, արդա-
րեւ յոյժ զգուշաւոր եւ համաձայն մտաց
հանգուցեալ Հայրապետին Սերոբի. բայց
երբ ընկալան զհաճութիւն 'ի Կաթուղի-
կոսէն վասն առաքելոյ զնոյն կարգադրու-
թիւն 'ի հաստատութիւն, բաժանեցան
յերկուս հաւասար դասս, վասն զի լաւա-
պէս գիտացին թէ՝ նոյն կարգադրութիւն
հակառակ է ներքին կամաց իւրեանց եւ
գլխահար, եւ ոչ երբէք յառաջ վարել կա-
րեն զգիտաւորութիւնս իւրեանց։ Աբծ-
րունին ծանուցեալ զմիտս նոցա հեռացաւ
հանդերձ պատուաւորօքն, եւ ես անհա-
մաձայն գտայ 'ի խորհուրդս մտախոհ ե-
ղիտասարդացն. ապա եկն Մակար արքե-
պիսկոպոսն առ մեզ ուր էր եւ Պ. Աղեք-
սանդր Թայիրեանց, որ հոգաբարձու էր
ուսումնարանին, եւ ասաց ցիս. «զքեզ

ճանաչեմ մի 'ի Ղեւոնդեանց քահանայից, եւ զՆշխարանդրՙ մեծն Պարդան, եթէ դուք կարասջիք խափանել որպիսի եւ իցէ միջոցօք զանտեղի խորհուրդս երիտասարդարցդ այդոցիկ»։ Ընդ այս բան նորա մեք դրեցաք 'ի մեր կողմանէ Պաթուղիկոսին թէ կարդ ուսումնարանին մինասցէ համաձայն բարձրագոյն կարգադրութեան. բայց յայսմանէ եւ ոչինչ։

Բարձրագոյն կարգադրութիւնն ոչ այլ ինչ ցուցանէ, բայց միայն այս, զի ուսումնարանն ընդ կառավարութեամբ լիցի Ռաջնորդին, նորոգ հաստատեալ անդամք հոգաբարձութեան ծանիցեն զՌաջնորդն, եւ Ռաջնորդն զՊաթուղիկոսն եւ զՊինոգն. իսկ նոցայն աշխատութիւն այն է, զի 'անդամք եւ Ռաջնորդքն հաւասարապէս զՊաթուղիկոսն ծանիցեն, եւ Ռաջնորդն կիսով ձայնիւ միայն առաւելասցի քան զնոսա. ես ըզ ինքս սորա լուսապէս գիտէի եւ 'ի վաղուց անտի փորձով տեսեալ էի, վասն որոյ ոչ համաձայնեցայ 'ի վերջոյ ընդ այսր դրութեան մերոյ, եւ զկարգադրութիւնն դրեալն Ամրծրունեանսէ եւ 'ի միւսոց կուսակցացն առաքեցաք առ Պաթուղիկոսն վասն վերաքննութեան 'ի ձեռն Մակար

արքեպիսկոպոսին. անդանօր թողեալ ըղ-
դեղեցիկ կարգադրութիւնն Ստրծրունեայ
հաստատեալ էին զերկրորդն եւ առաքեալ
'ի ձեռն Աղիազար արքեպիսկոպոսի բա-
բեկամին իմոյ. եւ որովհետեւ 'ի նմին կար-
գադրութեան կապեալ կային ամենայն իշ-
խանութիւնք Առաջնորդին ընդ իրաւա-
սութեամբ անդամոյն, զլոկ անուանակո-
չութիւն նախագահութեան միայն ընծայ-
եալ, եւ ես չէի սովոր եւ չկամէի իսկ կապ-
եալ ոտիւք եւ կապեալ ձեռօք ծառայել
Աղգին, վասն զի եթէ սովոր էի հաւատար-
մութեամբ ծառայել, ուրեմն անմարթ էր
ինձ կապեալ ծառայութեամբն ծառայա-
նալ եւ նուաճել զճշմարիտն հաւատար-
մութիւն, այր աղագաւ եւ չէր ինչ փոյթ
վասն անձնական օգտի եւ շահախնդրու-
թեան թոյլատրել զյայտնի հրդեհն բորբո-
քիլ ազատաբայլ. վասն որոյ կոչեցի զիշ-
խանսն եւ զխորհրդական անձինսն եւ առ-
եան կազմեալ ընթերցայ առաջի նոցա ըզ-
կոնդակ Հայրապետին ուրախութեամբ
սրտի, բայց եւ ոչ անմասն 'ի տխրութենէ,
եւ հրաւիրեցի առաջի նոցա զնոր հոգա-
բարձուն զի ինքեանք կատարեսցեն որ-
պէս եւ կամին, սակայն ես չեղէ մնանա-
կից. ընդ նմին յայտնեցի ասասանօր թէ

իշխանութիւն Հայրապետին յորոնմ պա-
ռնակի, եւ գործողութիւն Առաջնորդին
որ ընդ իշխանութեամբ նորին՝ յորոնմ։
Նոքա տան եւ երկու ձայն, ըստ թուոյ
ընտրութեանցն, իսկ Առաջնորդն տեղի
մի միայն կիսով ձայնիւ. եթէ նոքա չունի-
ցին կախումն զԱռաջնորդէն, զի՞նչ կարէ
նա յառաջ վարել, թէ՛ յընտրութեան ե-
կեղեցական ուսանողութեանց թէ՛ Հաստ-
ուածաբանական եւ 'ի կրօնական առար-
կայս. քանզի եթէ հոգաբարձուք ընտրես-
ցեն եւ նմա առաջարկեսցեն զուստուցիչս
Հաստուածաբանութեան եւ կրօնագիտու-
թեան եւ նա եթէ ոչ հաւանեսցի՝ ոչ կա-
րէ փոխել զայն, այլ դիմելոց են 'ի միասին
առ Կաթուղիկոսն. զի եթէ ներգործու-
թիւն ձայնին է որ զօրէ, ուրեմն տան եւ
երկու թուոյն ձայն զանարժանն կարեն
ընտրել. զի՞նչ կարէ առնել յայնժամ ա-
ռաջնորդն. եւ Կաթուղիկոսն եւս գոլով
հեռաւոր, եւ բռնազբօսեալ յիւրմէ թե-
լադրութենէ, յորոշմանն պարտի հաստա-
տել զայն՝ յոր կոյս ձայնքն բազմութեան
միաբանք լիցին. իսկ Առաջնորդն յայն-
ժամ թէ եւ ակն յանդիմանն տեսանէ ըղ-
ձնաս վճռոյն, պարտի լուել եւ զպաշտօ-
նին ամիսոփել զբաղուկս 'ի պարտուպատ-

շաճ անօրէնութիւն իւրոյ գործառնութեանց. յայտնի իսկ է զի այս օրինակ են թարկութիւն ոչինչ նշանակէ՝ բայց եթէ շեղել յիւրոյ սեպուհ պարտաւորութեանց յաղագս իւրոյ ընչաքաղցութեանց 'ի վերնաս աղդի եւ եկեղեցւոյ։

Այս հրաժարեցայ յայսմանէ ձեռնարկութենէ, եւ նոքա տեսեալ թէ անհնարին է խնամ ներկայութեամբ հասանել նը պատակաց իւրեանց, ուստի խորհեցան նախ զհզօրն կապել եւ ապա զտուն նորա աւար հարկանել. վասն որոյ ընտրեցին զերիս ստորամիտ եւ մնանկացեալ անձինս, եւ 'ի ձեռն նոցա եռուն գիր՝ որպէս լուայ՝ գրեալ թէ Սարգիս եպիսկոպոսն կամի զուսումնարանն փոխադրել 'ի Սանահին, վասն որոյ ինդրեմք չթողուլ փոխադրել զուսումնարանն. զոր առեալ վարձաւոր սպասահարկուքն անկեալ էին դրանէ 'ի դուռն եւ խաբեալ էին զհամբարս եւ առեալ էին նոցա ստորագրել յոյս միտս, եւ չբոլեցուցանողացն առեալ էին գիր՝ զի յետ 'ի կատար ածելոյ զյանձնարարութիւնսն, 'ի տեղի վարձուց կարգեսցեն զնոսա 'ի պաշտօն ուսումնարանին, որպէս եւ արարին իսկ, որպէս յետոյ գրեցին ինձ նոքին համբարքն, զորոց ապաշաւանայ զբաղմաստոս-

բաղիրան ունիմ առ իս, եւ բայց յայնմանէ թէ ընդ նմին զի՞նչ են գրեալ եւ բարուրեալ՝ մինչեւ ցարդ անտեղեակ։ Յետ 'ի կատար ածելոյ զաշխատութիւնս իւրեանց, զդիրն բաղմասաստրագիր առաքեն Յէջմիածին։ Սաթուղիկոսն զիս եւս հրաւիրեաց վասն բարեկարգելոյ զուսումնարանն. 'ի միասին գնացեալ նոցա եւ ներկայացեալ յատեան Տրին վերհասառութեան, արդարեւ զարմանաց արժանիք էին որ անդն արարուածք. պատգամաւորքն իբրեւ արձան կանգեալք՝ ոչինչ խօսէին. Սաթուղիկոսն զգանգատանայն ոչինչ հարցանէր, եւ ոչինչ եղեն բանք զբարեկարգութեանց. միայն իբրեւ դատաւոր եւ դատախազ աղմուկս եւ շփոթս յարուցանէին եւ սաստիկ որոտմամբ զօգս դղրդեցուցանէին. բայց թէ զի՞նչ անբմբռնելի 'ի մոցա խոսքս խօսողին եւ լսողին, յայս եղանակ դադար առին ամենայն հանդամանք վերաբերեալք առ հաստատութիւն համազգական օգտակարութեանց եւ հեռասպնդութեանց, հեռատեսութիւնն պսակելով եւ անձնուիրութիւնն ապախտանալով։ Պատգամաւորքն վերադարձան 'ի Տփխիս սիրով եւ բաւականութեամբ. իսկ ես տեղի կալայ այնուհետեւ մնալ Յէջմի-

ածին, քանզի չեւ յանդ ելեալ եւ վճռեալ դարձոյ երիք եւ խօսելոյ ինչ պատկանա-
ւորս, վառեալ անդէն 'ի կրկին 'ի հարկէ 'ի տմարդական դրդմանէ՝ վաղվաղակի դը-
րէ Պաթուղիկոսն առ Պանսխատորիայն Պ բասանի՝ ապօրինի կերպիւ կարճելոց
յիշատակութիւն անուան իմոյ եւ կորզել զսահմանեալ ռոճիկն. եւ Պանսխատորն եւս
այնուհետեւ ոչինչ ակնածեալ առ կարգ եւ իրաւասութիւն Սինոդական իշխանու-
թեան, յանդգնեալ էր ձեռնամուխ լինել 'ի անական կահուկարասիս իմ, իբրեւ մա-
հապարտի ուրուք եւ յանցաւորի, կնքե-
լով ըստ հաճոյս զդրունս Աղաչնորդարա-
նին. այս վերջին էր 'ի ցոյցս, որով գայի 'ի
զարմանս եւ յապշութիւնս խորհիս եւ ա-
պաշաւանս։

Իշխանք Տփխիսոյ լուեալ զայս տմար-
դական վարմունս ընդ իս, անճապարեցին
դրել միահամուռ եւ խնդրել իրաւախն-
դիր առաջարկութեամբ քննել եւ վերա-
հասու լինել ճշմարտութեան բանին. եթէ
յանցաւոր իցէ, ասեն, ըստ յանցանացն
պատժել, ապա թէ ոչ՝ խրախուսանօք եւ
պատուով յետս դարձուցանել։

Երդ թողեալ զբաղմաստորագիր խրն-
դիրս իշխանաց աղնուականաց եւ համար-

Եստիցն Տփխիսոյ, զմինն միայն եդից
աստանօր, զոր գրեալ էր առ Նորին վե-
հափառութիւնն Իվան Մինասեան Մի-
զոյեանց 'ի 20 յունվարի 1862 ամի, օ-
րինակ զայս՝. « Զերոյին Վեհափառու-
« թիւն Ամենողորմած Տէր. Հշմարիտ եւ
« հարազատ հայրենասէր անձին ո՛րչափ
« քաղցր է եւ ցանկալի բարօրութիւն եւ
« յառաջադիմութիւն իւրոյ ազգին եւ
« պայծառութիւն եկեղեցւոյ Սրբոյ, եւս
« առաւել դառն է եւ ցաւեցուցիչ հոգ-
« ւոյ նորին տեսանել զազգն իւր եւ զեկե-
« ղեցի 'ի վտանգի եւ յեղափոխութեան։
« Որդիք Հայաստանի աշխարհաբեալք սբբ-
« բազանից առաքելոցն Թադէոսի եւ
« Բարթուղիմէոսի եւ բազմաչարչար նա-
« հատակի Սրբոյ Հօրն Գրիգորի Լու-
« սաւորչացն մերոց, միշտ եւ հանապազ
« անձնազոհ դտեալ են 'ի պաշտպանու-
« թիւն ազգի եւ եկեղեցւոյ ցայսօր ժա-
« մանակի, թէ եւ անկեալ իսկ են 'ի պէս
« պէս եւ անտանելի վիշտս եւ դժուարա-
« կիր հալածանս ընդ տիրապետութեամբ
« բարբարոս բռնաւորաց. այժմ հասեալ
« յապահով ժամանակի ընդ հովանաւո-
« րութեամբ աստուածազօր քրիստոնեայ
« տէրութեանն, փոխանակ անդորրու-

« թեան՝ զհոգեմաշ վիշտս տեսանելոյ, եւ
« այն 'ի մերազնէից խարդախ անձանց ո-
« մանց, որք տեղի տան ամենայն ուղղա-
« փառ եւ ճշմարիտ դիտողացն զյարգ
« բարւոյն ազգի եւ Աստուածեղական եկե-
« ղեցւոյն՝ արտասուաց դեռս իջուցանել
« յաչաց՝ ընդ որս եւ ես հաղորդ դառնիմ
« վշտակցութեամբ յոյժ յոյժ. զի զի՞նչ
« այս ազգակործական բաղմորոգայթ մե-
« քենայ, որ յայսմ դարու անբարեմիտ
« անձինք ոմանք ելեալ են յասպարէզ՝ ձե-
« ւացուցանելով զինքեանս նոր ազգասէրս
« եւ ցանկացողս լուսաւորութեան հայաշ-
« դի մանկտւոյն, պատրեն եւ դայթակ-
« ղեցուցանեն զպարզամիտս մերազնէից՝
« աւետելով նոցա թէ արդէն սկիզբն է
« դարձեան լուսաւորութեան. զայսպիսի
« առեալ ինքեանց պատրուակ զներքին չա-
« ղադուշակ դիտաւորութիւն իւրեանց ար-
« ձակ համարձակ տարածանել ջանան առ
« 'ի կորուսանել զազգն եւ զեկեղեցին, եւ
« ոչ է այս կարծիքական եւ թագուն ինչ,
« այլ քաջ յայտնի ամենայն բանագիտաց
« եւ բարեպաշտից։ Ոչ ապաքէն գործք
« նոցին մեքենայից են քանի մի օրագիրք
« եւ ամսագիրք լի վատահնչիւն համբա-
« ւօք եւ յոգուածովք որք են հրաւիրակք

« նոցա առ խղճալի հայաղգիս . թէպէտ
« քաջ գիտեմ զի վերհատառութեան Ձե-
« ռում այնոքիկ գաղէթայք ատելիք են ,
« այլ այսու ամենայնիւ քաջայոյս եմ թէ՝
« սրբութիւն Ձեր գոլով իսկապէս պաշտ-
« պան հաւատոյ եւ առաքելական ծի-
« սից եւ արարողութեանց , միշտ հոգե-
« բուղխ եւ ուղղափառ մատենիւք ախոյեան
« հանդիսացեալ է այնպիսեաց չարափա-
« ռաց , դուցէ եւ ընթերցեալ լիցէ զայնո-
« սիկ չարաթոյն գաղէթայս , յորս ոչ գոն
« ինչ յօգուտաձք՝ որ չիցեն լցեալ անտա-
« նելի հայհոյութեամբ եւ պարսաւանօք՝ ի
« վերայ հոգեւորականաց աղգի մերոյ , ոչ
« միայն դատանեցելոց յայժմեան դարու ,
« այլ եւ՝ ի վերայ նախնի սուրբ եւ ուղ-
« ղափառ վարդապետաց իսկ , որք յատուկ
« պաշտպան եւ նեցուկ եղեալ են աղգի
« եւ եկեղեցւոյ արթուն հովուութեամբ
« եւ Պատուածարան քարոզութեամբ։ Զի
« յետ բարձման թագաւորութեան Ֆայ-
« կազեանս սեռի՝ նոքա զանրիծ հաւատ
« մեր հաստատուն եւ անդրդուելի հա-
« տուցին մեզ , տանելով զանազան հալա-
« ծանաց բարբարոս աղգաց , զոր խախտել
« ջանան յիշատակեալ գաղէթայք եւ իբ-
« րեւ ընտանի թշնամիք յարուցեալ յորդ-

« ւոց Հայաստանեայց ցանկան խորասոյզ
« առնել 'ի վիհս մոլար եւ չարաղանդ կը-
« րօնից՝ աղտեղելով զսիրտ եւ զհոգի պար-
« զամտաց ազգի մերոյ պէս պէս նորահը-
« նար կեղծ համոզանաք. վայ՝ ազգին այ-
« նորիկ, զի այդպիսիք պարտին կալնուլ
« զտեղի Աստուածաբան վարդապետաց
« մերոց. դեռ թող լաւ ընթեռնցուն նո-
« քա զՆռաքաղ ախոյեանն իւրեանց, յոր-
« մէ բուրէ սիրալի հոտ վարուց եւ դոր-
« ծոց նախնեաց մերոց, որ 'ի լոյս ընծայէ
« զանազան հնագոյն վարդապետութիւ-
« նքս 'ի մխիթարութիւն մեզ եւ 'ի խթան
« այնպիսի չարամտաց. եւ որովհետեւ թե-
« լադիր նոցա է բանասարկուն Սատանայ,
« ոչ դադարի բուսուցանել 'ի սիրտս նո-
« ցա պէսպէս հնարս 'ի կատարումն կա-
« մաց իւրոց։ Զ ասն զի թէպէտ 'ի մի կող-
« մանէ նոքա ունին գործիք զգաղէթայս,
« — ահա միւս'եւս մտածեցին, ասե՛ս որպի-
« սի խորամանկութեամբ։ Ս. Աւետարա-
« նն Յիսուսի զգուշացուցանէ զմեզ
« թէ՝ այլ ոչ ոք զկարասի հզօրի մտեալ 'ի
« տուն նորա աւար հարկանիցէ, եթէ ոչ
« նախ զհզօրն կապիցէ եւ ապա զտունն նո-
« ցա աւար հարկանիցէ։ Այլ նոքա սկսան
« զայն առնել զհակառակն պատուիրանի

« Տեառն, զի Առաջնորդն մեր բարձր –
« սրբազան Սարգիս արքեպիսկոպոսն, որ
« արդարեւ արթուն տիրապետութեամբ
« հզօր պաշտպան էր հայրենի եկեղեցւոյ
« եւ միշտ փչրեր խորտակեր ղծածուկ մե-
« քենայս նոցա ազգակործանս, եւ ուղղա-
« փառ վարդապետութեամբ արթնացու-
« ցանէր զԲրիտոսեան հօտն հաւատաց-
« եալն ինքեան եւ չտայր կլանել չար վի-
« շապին եւ սովեցեալ գայլոց, բանալով
« ուսումնարանս յամենայն ուրեք, զցայգ
« եւ զցերեկ պարապելով 'ի շինութիւն եւ
« յօգուտ Հայաստանեայցս եկեղեցւոյ նա
« եւ 'ի լուսաւորութիւն մանկտւոյն կրօ-
« նաւորական ընտիր պարկեշտութեամբ,
« անշահասէր եւ անկաշառ հոգւութեամբ
« կառավարէր զբոլոր վիճակն ըստ ամե-
« նայնի դովելի։

« Այսոքինակ բարեգործութեանց նո-
« ցա վկայք ճատագովք հանդիսանան ոչ
« թէ միայն ընտիրքն եւ երեւելիք մերս
« Հայոց բնակելոց 'ի Տփղիս, այլ այնքան
« ճշմարիտ են բանք իմ, զի այլազաւան
« ազգ քրիստոնէից եւս զնորայն գովու-
« թիւն ունին 'ի սիրոս իւրեանց, եւ միշտ
« գոհաբանք են։ Ահա զայսպիսի հզօր
« պաշտպանն եկեղեցւոյ կապել կարացին

«նոքա խորամանկութեամբ։ բայց այսու
«ոչ բաւականացեալ ճիգն գործեն եւ զգ-
«ծայրագոյն հոգեւոր իշխանութիւնն նը-
«ւաճել ընդ բռամբ, զի արձակ համար-
«ձակ կարասցեն աւար հարկանել, աւա՛ղ,
«զի՞նչ։ —զառաքեալանդ ծէսս ասեմ եւ
«զարարողութիւնս եկեղեցւոյն մերոյ վե-
«ցացուցանել, զկանոնս սրբոց հարց ար-
«եամբ նահատակելոց ընդ ոտիւք արկա-
«նել, եւ այնպէս հարթայատակ առնել եւ
«կործանել զաղդս մեր եւ զեկեղեցի։ Ոչ
«ապաքէն այնպիսի սերմունք են, կամ
«լաւ եւս է ասել՝ համախոհիւ նոցա ծը-
«նունդք որք արդէն սերմանեալ բողբո-
«ջեն 'ի բաղում տեղիս, որոց զառաջս առ-
«նուլ ոչ կարեն անփոյթ եւ անփորձ հո-
«վիւք նոցա, եւ պահպանել զհօտն Քրիս-
«տոսի, որոյ՛ք օր ըստ օրէ առաւելու
«վտանգ եկեղեցւոյ մերոյ եւ աղգի։ Ա՛յ-
«հաւատ տէր, վշտացեալ գողով սիրտ իմ
«եւ հոգի յայսօրինակ աղդակործան արար-
«մանց ընտանի թշնամեաց հայրենի եկե-
«ղեցւոյ եւ աղգի, այսու համառօտ գրու-
«թեամբ փութացայ զթշուառ վիճակ խրդ-
«ճալի աղգին իմոյ աղդ առնել ձերում
«վերհսկութեան 'ի մտադրութիւն դե-
«րիմաստ վերիդ իբրեւ ջերմեռանդ եւ

« հարազատ հայ եւ որդի կաթուղիկէ ե-
« կեղեցւոյ Ս. Էջմիածնի եւ մտերիմ ձե-
« ռոյին սրբութեան։ Զի խիղճ է ինձ չա-
« սել եւ չգրել զատոյդն. այլ զոր գրեմն՝
« ոչ թէ վասն շահուց եւ օգտի անձին ի-
« մոյ կամ պատճառաւ ինն ակնկալու-
« թեան, զորմէ հաւատի առնել ունին
« Ձերոյին վեհափառութեան բաղումք՝ նա-
« մանաւանդ ճանաչողք զիս՝ որք արդէն
« դատանին այդր առ ձեզ, այլ 'ի լրութիւն
« ազգի, 'ի պատիւ եւ 'ի պարծանս Ձերդ-
« վեհափառութեան։ Ա՝ ասն որոյ եւ վրա-
« տահայեալ ամենախոնարհաբար խնդրեմ
« 'ի Ձերոյին վեհափառութենէ՝ առ 'ի զա-
« ռաջս ունելոյ ապագայ վասանդաւոր հե-
« տեւանաց երկպառակութեանց, թողեալ
« միայն զտնօրէնութիւն ձեր 'ի մասին ու-
« սումնարանին այնպէս, որպէս բարեհաճ-
« եալ է՝ 'ի բաւականութիւն ոմանց, շը-
« նորհ ունելով 'ի վերայ հարազատ որդւո-
« ցըս Ս. Ռուսաւորչին գթառատութեամբ
« բարեհաճիլ վերադարձուցանել յետս
« ատ զսիրելի առաջնորդն մեր զբարձր
« սրբազան Սարգիս արքեպիսկոպոսն լիա-
« կատար առաջնորդական իրաւամբք 'ի
« ցնծութիւն հոգւոց ջերմեռանդ հոգւով
« եւ ուղղափառ հաւատով միացելոցս եւ

« յահարկութիւն այնոցիկ խաժամուժ եւ
« ապստամբ անձանց , եւ այս օրինակ խրն-
« դիր ոչ թէ յինէն միայնոյ համարելոց է
« վերհատուածոյ տէրդ , այլ ընդհանուր ազգին
« մերոյ դատանեցելոց յայսմ վիճակի յընտիր
« եւ երեւելի իշխանաց քաղաքացւոց եւ 'ի
« բուն ժողովրդականաց։ Թէպէտ անձինքն
« այնոքիկ խարդախամիտ խաբէութեամբ
« ժողովեալ զստորագրութիւնս մատուց-
« եալ էին Ձերոյին վերհատուածեան 'ի
« դանդատ զառաջնորդէն , զայնմանէ դը-
« րել ընդարձակաբար ձանձրոյթ վարկա-
« նիմ մաքուր լսելեաց ձերոց։ Վասն զի
« այնպիսի մասն ժողովրդականաց 'ի հաչիւ
« արկանելով փոխարինել ընդ բոլոր վիճա-
« կի յարդելի ժողովրդականաց՝ յոյժ ծանր
« է։ Այլ որովհետեւ արդէն սովորութիւն
« է եղեալ 'ի քաղաքիս , զի երթէ ոք զայլ-
« մէ ումեմնէ ունի զանբաւականութիւն
« կամ զթշնամութիւն , զչարն բարի , զա-
« նարժանն արժանաւոր կացուցանել ջա-
« նալով անստորագիր կամ բազմաստորա-
« գիր նամակօք ձանձրացուցանելով զսուրբ
« սիրտ ձեր , զայնպիսին այնու թակարդեն
« 'ի վտանգ , որպիսի նամակք չէին ընդու-
« նելիք 'ի նախորդաց ձերոց , ուստի եւ ան-
« դորը կենցաղավարեալ՝ միայն փոյթ ու-

« նէին պայծառաղարդել զեկեղեցին : Փա-
« ռաւորեալ ինքեանք՝ փառաւորէին զաղ-
« գէն մեր համայն առ այլի օտարազգեաց ;
« Ուրեմն առ 'ի արդելուլ զյօրինումն այն-
« պիսի մուշալամայից, առաքմամբ սուրբ
« կոնդակի Ձերոյին վեհափառութեան
« հրամայեցէք ընթեռնուլ յամենայն եկե-
« ղեցիս : Մրպիսի հայրական խնամով Ձե-
« րոյին վեհափառութեան մխիթարեալ ու-
« նիմք վայելել զանպատմելի խաղաղու-
« թիւն, եւ ցանկալին ամենեցուն միա-
« բանական սէրն թագաւորելով 'ի մեզ ու-
« նիմք մնալ մշտապէս օրհնաբան վասն
« երկարութեան կենաց հայրապետիդ մե-
« ծոյ միշտ եւ հանապազ, անդադար յու-
« սով ակն ունելով 'ի ձէնջ, ողորմածագոյն
« տէր, փութով ընկալնուլ զուրախարար եւ
« բարեհաճ պատասխանն ձեր շնորհաբեր։ »

Սակայն 'ի պատասխանի երեւելի ի-
խանաց եւ բոլոր հասարակութեանն այս
միայն եղեւ 'ի դրդմանէ թշնամեաց իսոց,
զի կաթուղիկոսն լու 'ի լու ասաց . « կամ
ես պարտիմ լինել կաթուղիկոս, կամ դու
առաջնորդ . » սոփաւ ամենայն լինչ եհաս 'ի
ծայր կատարելութեան . ահա այս են բո-
վանդակութիւն ամենայն անցիցն որք զի-
նեւ անցին, եւ բուն պատճառք ամենայն

խառնութեանց։

Որդ՝ ի քինախնդրութեանց քանի մի դիւերաշրջիկ ընկերշակութեանց եկին ի վերա իմ այս ամենայն ընդդիմութիւնք, զորոց յիշեցաք ի լուր բարեկամիդ։ Նոքա ոչ զանդիտացին պատրաստել վասն իմ ըզբարոյական մահ ընդդէմ արդարադատ խղճի եւ ընդդէմ ամենասուրբ կամացն Աստուծոյ։ Առ կաթուղիկոսն բողոքեցի բանալ զքննութիւն եւ ստուգել զյանցանսն իմ, ի չարախօսացն կաշկանդեալ ոչինչ եւս պատասխանի։ Առ տերութիւնն դիմեցի, եւ նա կաթուղիկոսի գործ համարի զայն. ուրեմն առ ո՞վ պարտէի դիմել զի լինէր աջակից ճշմարտութեան. վասն որոյ ցաւիմ ոչ վասն իմ, զի խեղճ իմ եւ Աստուած ոչ սոգտանեն զիս, այլ ցաւիմ վասն գայթակղողացն յիս, եւ չէք ոք որ զլոյս ճշմարտութեան դնիցէ ի վերայ աշտանակի ճշմարտութեան. եւ ընդէ՞ր ոչ գան առ լոյսն քննութեան, չգիտեմ. ո՞չ ապաքէն արդար եւ ճիշտ քննութիւնն է փորձաքար արդարոց եւ մեղաւորաց. սակայն գրեալ է. «որ զչար գործէ՝ ոչ գայ առ լոյս, զի մի յանդիմանեսցին գործք նորա»։

Վերջապէս Կաթուղիկոսն զիջանի սրտի մնօք յանստորագիր նամականիս նո-

ցա, ուրեմն է եւ համակարծիք. ընդհան-
րութեան Հայրապետ է նա, ծանր է նմա
ոչ միօրինակ հայել առ ամենայն անհատս
ազգին. չէ պարտ նմա աչառութեամբ բե-
րել առ ո՛ եւ իցէ անձինս. յունկն բարե-
կամիդ խօսիմ եւ զայս ոչ 'ի գանգատ՝ այլ
'ի գիտութիւն Ձեր. նա պարտաւոր իսկ է
յայսպիսի դէպս ածել յուղղութիւն. իշխա-
նական պետութիւն իւր զպարտդ զայդ նմա
հարկեցուցանէ, եւ նա ոչ ընդ սահմանա-
ւրն անցանէ՝ եթէ առանց ոտն հարելոյ
որոշեսցէ զարդարութիւնս եւ զիրաւունս.
արդ Սաթուղիկոս է նա եւ անմիջական
Տէր համայն որդւոց ազգի. եւ անխոհե-
մութիւն եւ անհամարձակելի իսկ է բանս
առ նա յամեցուցանել. բայց չէ այս իրա-
ւունք յիրաւանցն Աստուծոյ թողուլ 'ի ը-
նութեան երբ կարող է ստուգել իրաւ եւ
արդար քննութեամբ, ամենեցուն ցու-
ցանել զբամբասանաց եւ զրպարտութեան-
ցն նշանակութիւն, եւ զժպիրհան յայտնի
աշխարհացոյցս առնել եւ պապանձեցու-
ցանել զչարաբան լեզուս, զի մի՛ վատա-
հասցին նոյնանման սոսկալի զրպարտու-
թիւնս եւ բարուրանս բարդել 'ի վերայ ո-
րոց եւ իցէ 'ի տարապարտուց անստորա-
գիր նամակօք եւ պատրուակեալ անուամբ.

բայց երբ անյայտ անուամբ եւ անձամբ հռչակ հարկանէին զտարօրինակ մահուանէ Տ. Ներսէսի երջանկայիշատակ Հայրապետին եւ զՏ. Մատթէոս կաթուղիկոսն ածէին 'ի հաւանութիւն, ես զիսկութիւն իրացն 'ի վեր հանել կամելով գրեցի առ Սորին սրբութիւնն զերկուս նամակսն, զօրինակն որոց եդիս առասնօր ձեզ 'ի տեղեկութիւն, գրեալ 'ի 5 մայիսի 1863 ամի օրինակ զայս. «Զանկեղծ հաւատարմութիւն իմ առ Ձեր սրբութիւն առ աղգն իմ եւ առ եկեղեցին, որ յայտնի իսկ է Աստուծոյ հզօրի, թշնամիք ճշմարտութեան արարին կասկածաւոր, բայց չէ փոյթ ինձ, զի սիրտ իմ եւ խիղճ անդորր է գլխովին առ Աստուած եւ առ Ձեզ, ուստի մնացեն այդոքիկ 'ի վրէժխնդրութիւն նորին արդարութեան, առալի որոյ ամենայն ինչ կայ մերկապարանոց, զի օր աւուր ահա յայտնին թշնամիք ճշմարտութեան, զի զի՞նչ իցէ ծածուկ որ ոչ յայտնեսցի ըստ անանց վճռոյն Քրիստոսի։

«Բայց ցաւ է, վերհատառ Տէ՛ր, զի ես չրջապատեալ բոցով զրպարտութեան անարատարգիր նամակաց՝ ըստ անմեղ ողջակէզ մանկանցն Աղբոքայ առչորէի մոր-

« մոքէի եւ ձայն'ի հրոյն արկանէի առ Ն՚այ-
« ըրդ հոգեւոր գրով եւ բանիւ թէ մի՛
« հաւատայ.ք զի սոքա են օգտածարաւ.ք
« ոմանք եւ աղանդաւոր .քանի մի թշնա-
« մի.ք հայրենի եկեղեցւոյ, զի կամին սեր-
« մանել մեղմով զաղանդս իւրեանց 'ի սիր-
« տս անմեղ մանկանց, վասն որոյ եւ զիս
« գտեալ արգելլ.ք իւրեանց գաղտնի ներ-
« դործութեանց հեռացուցանել կամին։
« Սակայն ձայն զրպարտիչ անսաստրագիր
« նամակաց նոցա ըստ օրինակի փողոց
« ծնծղայից եւ շեփորաց հեղձուցանէին զի-
« բաւացի աղաղակ իմ որ առ Քեր սրբ-
« բութիւն, եւ անլուր առնէին մինչ իս-
« պառ։

« Սակայն գոհութիւն Աստուծոյ, օր
« աւուր յայտնի լինին առ Քեր սրբու-
« թիւն, որպէս ամենայն գարանք նոցա առ
« աղդն մեր, նոյնպէս եւ իմ ճշմարիտ ա-
« ղաղակք, թէ՛ այդր 'ի Տփխիս, եւ թէ՛
« այժմ 'ի Շամախի, զորոց լուր են աս-
« տանօր եւ զորոց եան խօսէի եւ դրէի։

« Զինչ եւ իցէ, անցեալն էանց, մի-
« այն խնդիր իմ 'ի Քերդ սրբութենէ
« նախ այն է՝ տալ ինձ հրաման գնալ 'ի
« Սանահին մի ամիս ժամանակաւ, որպէս
« զի ժողովեալ զդոյս իմ որ աստ եւ անդ

« կան ցանուցիր եւ զորոց ցայսօր չգիտեմ
« ինչ ահա՛ տարի եւ կէս է։

« Երկրորդ բանալ քննութիւն 'ի վե-
« բայ ամենայն գանգատանաց զինէն եղե-
« լոց առ Ձեր սրբութիւն, մանաւանդ 'ի
« վերայ երից զարհուրելի զրպարտութեանց
« թէ ես եղեալ եմ դաւաճան կենաց հո-
« գեւոր ծնողի իմոյ թեզադրութեամբ ան-
« բուութեան, թէ ես յարակայ նատեալ 'ի
« կառս շրջիմ ընդ էքզարխին Ռուսաց,
« խորհիմ զաղգն դարձուցանել 'ի յունաց
« դաւանութիւն, թէ ես զամենայն գաղտ-
« նի նամականիս յօտար տէրութեանց առ
« Սաթուղիկոսն՝ զկնիկ մահուան նորա
« տարեալ եմ առ Փոխարքայն Եւայն.
« եւ սրբութիւն Ձեր զայն անասորագիր
« նամակ առաքեալ 'ի Սինոդն ընթերցան
« 'ի լուր ատենակալաց, եւ առաքեցիք
« զայն ցաւօք սրտի։

« Սոյն այս համբաւ տարածեալ յա-
« մենայն ազգս մեր 'ի ծագս աշխարհաց,
« այսուհետեւ անհնարին է լռեալ համ-
« բերել եւ ոչ յայտնել լրութեան ազգին
« եւ ուր հարկն է, զի ստանիր կամիմ
« հանել 'ի հանդէս զճշմարտութիւն իմ
« եւ արդարութիւն, եւ ապա մեկուսա-
« նալ այլուր 'ի լրումն բաղձանաց իմոց

« հակառակորդաց , որք խրեանց քսու-
« թեամբ զինեն՝ անհանդիստ զսրբութիւն
« Ձեր արարեալ են եւ անդադար առնեն ։
« Ձէ վոյթ , եթէ դոյ յիս եռանդ ազ-
« դասիրութեան՝ յամենայն ուրեք ցու-
« ցանելի անժխտելի փաստիւք . զի ամե-
« նայն ուրեք գտանին ազգ մեր՝ որք կա-
« րօտ են հաւատարիմ սրտացաւ եւ հա-
« ղարատ ծառայողի ։

« Զայս եւս յայտնեմ խոնարհաբար
« Ձերոյին սրբութեան , թէ սոյն իմ հե-
« տապնդութիւնք ճշմարտութեան չեն
« Ձեզ ամենեւին ընդդէմ կամ վնասա-
« կար . եթէ ցանկայք ըստ Ձերում վսեմ
« եւ սեպուհ պաշտօնի տեսանել զհանդէս
« ճշմարտութեան՝ լերուք հետամուտ ։ »

« Եւ երկրորդն 'ի 23 յուլիսի ամի հա-
մար 23 , օրինակ զայս . « Ընպաքէն յայտ-
նի են Ձերոյին Սրբութեան թէ 'ի մոռա-
նելն Ձեր յայս վիճակ՝ յաճախեցան առ
Ձեզ յիմ վրայ անստորագիր նամակա-
նիք , յորս գրէին թէ ես զաղդն կամիմ
առնել կրօնափոխ առ յոյնս թեւակոխ-
լով , եւ թէ՝ մարմնաւոր իշխանութիւնն 'ի
ձեռն Սուրենեանց Դաւթի առաքեալ
առ իս զթոյն , որով ես զՊատուաճանման
բարերարն իմ զ'Ներսէս կաթուղիկոսն ա-

բարեալ եմ դեղակուր. զորպիսի նամակ Սրբութիւն Ձեր առաքեցիք 'ի Սինոդն, զոր ընթերցան յԱտենի անդ, եւ որոյ վերայ Պրոկուրորն պահանջեաց զտեղեկութիւն։

«Թէ եւ սոյնպիսի աղճատ եւ անաստուած նամակաց բազմիցս պատասխանեցի դրով եւ բանիւ, յայտնելով զբուն պատճառն, այն է՝ զի նոքա այսու հեռացուցանել կամին զիս, որպէս զի զհերձուածս իւրեանց 'ի ժողովուրդս սերմանեսցեն. սակայն իրաւացի պատասխանիք իմ առ Ձեր սրբութիւն ո՛չ դտին զտեղի, թէ եւ 'ի Պոլսոյ այլ ինն կերպ գրեն, զորոյ զպատճէնն ընդ սին առաքեմ։

«Ապա դարձուցի զերեսս իմ առ ծածկագէտն Աստուած եւ 'ի նմանէ խնդրեցի, զի նա յայտնեսցէ Ձեզ զամենայն։ Զոհանամ զԱստուծոյ իմոյ, զի մինն 'ի դրութեանց իմոց ահա կատարեցաւ, ազանդ եւ հերձուած տարածեցաւ 'ի դեմին քաղաքի յետ ելանելոյ իմոյ. ուրեմն մինն 'ի զրպարտութեանց յիմ վերայ՝ դարձաւ 'ի գլուխ զրպարտողաց, եւ ես շնորհօք Քրիստոսի արդարացայ եւ արդարանամ։

«Իսկ թէ Սրբութիւն Ձեր վասն

էր ոչ հաւատայիք իմոյ ճշմարիտ բանից, հեռացուցիք զիս եւ ետուք նոցա զտեղի ընդարձակելոյ զհերձուած ի ժողովուրդըս, անկարօտ է մեկնութեան։

«Իսկ այժմ եւ միւս զրպարտութիւնն ի վեր ելանէ յայտնութեամբ ճըշմարտասիրին Աստուծոյ, որ ոչ թողու դատապարտել արդարոյն ընդ ամբարիշտ, ըստ այնմ թէ արդարն փրկանի յորդայթէ որսողաց, եւ փոխանակն նորա մատնի ամբարիշտն։

«Ապա աբեղայ ոմն Անդրէաս անուն՝ զոր Վեհափառութիւն Ձեր բարեհաճեցայք կարգել վանահայր հռչակաւոր ուխտատեղւոյն Թելեթի, ի ներկայութեան երկուց քահանայից՝ Յսայեայ եւ Յակոբայ, եւ երից աշխարհական պատուելեաց՝ Խահակայ Մարտինիչի, Եպիսկոպոսայ Դաւթեան Ծովինեանց եւ Սողոմոնի Շօլկովեանց՝ յայտնապէս խօսեցեալ է թէ Սարգիս եպիսկոպոսն զՍերսէս Սաթուղիկոսն արար դեղակուր։

«Ահա, Վեհափառ տէր, յայտնեցաւ անստորագիր նամակագիրն, ուրեմն է թէ ձեզ չէ կամք արատաւորել զեպիսկոպոսն ձեր եւ զտէրութիւն անդամ, ժամ է կոչել զնա եւ ստուգել առաջի վկայից։

Այս երբէք ոչ դադարիմ 'ի պահանջելոյ զօրինաւոր քննութիւն 'ի ձեռն մարմնաւոր իշխանութեան եւ 'ի վեր հանելոյ զճշմարտութիւնն 'ի նախատինս ամենայն չարալեզու զրպարտողաց, որք կամեցան արատաւորել զանուն իմ անխիղճ նամակօք 'ի տրիտուր բազմամեայ խմոց քրտնաջան վաստակոց, որով եւ բարձից զամենայն դայթակղութիւնս սերմանեալս 'ի նոցունց 'ի սիրտս ժողովրդոց։»

Ահա այսոքիկ գրութիւնք իմ հնացին անդործադիր, եւ 'ի կողմանէ 'Սորին սրբութեան չեղեւ ոչինչ հետաքննութիւն. վասն է՞ր, վասն այն զի զրախնդիրքն այն շրջապատեալ զնովաւ յամենայն դէպս ջանացին խափանել. զարհուրեցան եւ սարսափեցան դիտելով անշուշտ թէ կա՛մ խոպան ստեսցի դաւաճանութիւնն, կամ եթէ ստոյգ իցէ, այլք եղիցին յանցաւոր եւ ինքեանք ոչ կարիցեն հասանել զժուխրմբեր նպատակաց իւրեանց. վասն որոյ յամենայն դէպս ծածկեցին զքննութիւնն եւ յաճախեցին առիս զզարհուրելի զրպարտութիւնս։

Ընդ զրպարտութեանց նոցա եւ զրաբանութեանց հետեւանք այս միայն եղեն զի ես հրաժարեցայ 'ի պաշտօնէս, ո-

րով եւ խափանեցան ամենայն ազգօգուտ դիտաւորութիւնք իմ, զոր 'ի վեր անդր յիշեցի, եւ Մակար արքեպիսկոպոսն եղեւ առաջնորդ. եւ այսպէս ուսումնարանն եւ յառաջադիմութիւն նորա օր աւուր խանգարեցաւ, զորմէ բացայայտ գրէ մին 'ի զուգախտակցաց նոցա։ Զո՞վ արդեօք 'ի բանիբուն վարժապետաց ածին եւ մուծին յուսումնարանն եւ զո՞վ կարգեցին վերատեսուչ՝ յետ գովութեանց արժանաւորի Յովհաննէսի Ղազարեան Ղայթմազեանց, նա որ 'ի ժամանակս մեր ձրի նուիրէր զծառայութիւն իւր նմին ուսումնարանի, յետ այնորիկ ոչ յօժարեցաւ նա, եւ հրաւիրմամբ բազմաց եւ կոնդակօք կաթուղիկոսի մնանել անդ ռոճկօք անդամ 'ի ծառայութիւն վասն անբարեկարգ եւ խառնիխուռն դրութեանն որոյն։ Ի վերջոյ անցեալն էանց, զի ես ոչ ըստ Յոնանու դիտեմ թէ ընդէ՞ր ես ատեցայ եւ Սինէ ոչ կործանեցաւ. այլ առաւել քան զառաւել ցանկամ զի բանք իմ ատեցին եւ ուսումնարանն ծաղկեսցի եւ բարգաւաճեսցի 'ի պէտս ազգին։ Ցանկամ զի օր աւուր պայծառասցի շնորհօք Ս. Հոգուածութեան նորա 'ի պարծանս ազգի եւ հիմնադրի նորին երջանկայիշատակ եւ ազգա-

սէր կաթուղիկոսի։ Ահա այս են իմ առաջին եւ վերջին բաղձանք։

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՋԱԼԱԼԵԱՆՑ

25

ՎՐԻՊԱԿՔ

Երես	Տող	Պակաս	Սխալ	Ուղիղ
20	10	փիլիսոփայից		
21	6	որ		
21	25	ինչ		
22	1		վեր	ի վեր
23	4	.		...
23	15		կեղանուՔեան	կենղանուՔեան
29	24		Աստուածոյն	Աստուծոյն

2739 – 2744

<< Ազգային գրադարան
NL0029274

<< Ազգային գրադարան
NL0029273

<< Ազգային գրադարան
NL0029272

<< Ազգային գրադարան
NL0029271

<< Ազգային գրադարան
NL0029275

<< Ազգային գրադարան
NL0029270